Ազգ

Azg
armenian daily

19 ՅՈՒՆԻՍ 2003 ՀԻՆԳՇԱԲԹԻ N5 (2800)

Տիեզերքը մեծ մասամբ բաղկացած է առեղծվածային «սեւ էներգիայից»

ՓԱՐԻԶ, 18 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նոր եւ սենսացիոն տվյալներ են ստացվել ԴաբլՅու էմ էյ Փի գիտական արբանյակից, որոնց համաձայն մեր տիեզերքը մեծավ մասամբ բաղկացած է առեղծվածային էներգիայից, որի բնույթն առայժմ տակավին չի ենթարկվում ժամանակակից գիտության ըմբռնմանը: 2001 թվականի հունիսին ՆԱՍԱ-ի արձակած արբանյակն այժմ թույլ է տվել ճշգրտել մի շարք հանգուցային տիեզերաբանական տվյալներ:

Այնպես է ստացվել, որ նյութի մեզ հայտնի տեսակները՝ սկսած ատոմներից ու վերջացրած մոլորակներով եւ աստղերով, կազմում են տիեզերքի սոսկ 4 տոկոսը: Հիմնականում այն լի է իր բնույթով անհասկանալի «սեւ էներգիայով»՝ տիեզերքի բաղադրության 73 տոկոսը: Մի շարք գիտնականների կարծիքով, էներգիայի այս տեսակն այն ուժն է, որը հակադիր է ձգողականությանը եւ նպաստում է Տիեզերքի ընդլայնմանը:

Տիեզերքի եւս 23 տոկոսը բաղկացած է այսպես կոչված «սեւ նյութից»՝ այն նյութական միացություններից, որոնք այսօր ընդունակ չէ հայտնաբերելու հայտնի գիտական սարքերից ոչ մեկը: Ընդամին մարդկային աչքը կարող է տեսնել տիեզերքի նյութական աշխարհի լոկ մեկ տոկոսը:

Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունները չի բարելավի, քանի դեռ չի կարգավորվել ԼՂ խնդիրը

Այս կարծիքին են Ադրբեջանի պետական, քաղաքական շրջանակները

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

«Հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների խնդիրները փոխկապակցված են: Հայ-թուրք-ադրբեջանական հարաբերությունները պետք է կարգավորել համալիր ձեւով, հակառակ դեպքում երրորդ կողմը միշտ խոչընդոտելու է», «Ազգի» հետ զրույցում ասաց նախագահ Հեյդար Ալիեւի նախկին օգնական, քաղաքագետ Էլդար Նամազովը:

Թուրքիայի ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյա, Բաքվում Թուրքիայի նախկին դեսպան Քադրի Էջվեթ Թեզջանի հանդիպումներն ԱՄՆ հայկական կազմակերպությունների հետ Ադրբեջանի պետական, քաղաքական, լրատվական շրջանակների ուշադրության կենտրոնում են:

Ադրբեջանական մամուլի արձագանքը խիստ բացասական է, ինչպես էր «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» ձեւավորման եւ գործունեության ժամանակ: Ադրբեջանցի լրագրողները, պաշտոնական Բաքուն չեն հավատում, որ իրենց ցեղակից թուրքերը հարաբերություններ կհաստատեն թշնամի հայերի հետ:

«Անշուշտ, Թուրքիան ինքնիշխան պետություն է եւ իրավունք ունի ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու: Սակայն հազիվ թե հնարավոր լինի հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը, քանի դեռ չի կարգավորվել ղարաբաղյան հակամարտությունը: Այդ որոշումը (հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը-խմբ.) կհակասի Թուրքիայի ազգային շահերին», ասաց Բաքվի «Էխո» թերթի մեկնաբան Մամադ Բագիրովը:

Տես էջ 5

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՀԱՅԱՑՔՈՎ

«Հասարակության ճնշումը չզգալու դեպքում իշխանություններն անում են այնպես, ինչպես իրենց է հարմար»

ՄԱՌԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մտավորականությունը դուրս է մղվում երկրի կառավարման գործընթացներից: Տարիների ընթացքում խորացված եւ մտահոգիչ դարձած այս երեւույթն իր ադաղությունը ստացավ անցած խորհրդարանական ընտրություններին: Խնդրի շուրջ զրուցեցինք Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարանի ռեկտոր ՍՈՒՐԵՆ ՀՈՎՅԱՆԻ հետ:

– Որ մտավորականության դերը նվազում է, մի կողմից բնական կարող է լինել, մյուս կողմից կարող է դիտարկվել որպես գործընթացների ախտանիշ: Բնական ասելով նկատի ունեմ, որ մտավորականը՝ արվեստագետը կամ գիտնականը, երբ զբաղվում է քաղաքականությամբ, հեռանում է իր բուն գործից: Բայց քաղաքականությամբ զբաղվելը եւս մտավոր աշխատանք է: Վտանգավոր է, որ մենք չունենք մտավորական քաղաքական գործիչներ, կամ նրանք քիչ են: Նկատի ունեմ մակարդակը եւ մարդու տեսակը: Պետք չէ մտածել, որ խորհրդարանական գործունեությունը չի պահանջում բարոյական չափանիշներ, մտավոր ունակություններ, ոչ էլ կրթություն:

Խորհրդային տարիներին, ճիշտ է, խորհրդարան ժողովուրդը չէր ընտրում, բայց պատգամավորների հանդեպ հասարակության կողմից որոշակի հարգանք կար՝ իրենց ոլորտի լավագույններն էին մտնում Գերագույն խորհուրդ, պատահական մարդը չէր կարող պատգամավոր դառնալ: Ցավոք, այսօր չկա այդ հարգանքը, սակայն դրանում հասարակությունը եւս ինքն իրեն պետք է մեղադրի: Հասարակությունն իր սահմանադրական իրավունքը սխալ է ըմբռնում, որպես իր ձայնը վաճառելու իրավունք: Կաշառվող ընտրողն ընտրում է կաշառակեր իշխանություն:

Տես էջ 2

Մագադանի նահանգապետի սպանությանը մեղսակից անձինք Հայաստանի միջով մեկնել են Էմիրություններ

ՄՈՍԿՎԱ, 18 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մագադանի մարզի նահանգապետի սպանությանը մեղսակից մի խումբ անձինք հեռացել են Ռուսաստանի տարածքից եւ Հայաստանի միջով մեկնել Արաբական Միացյալ Էմիրություններ: Այդ մասին այսօր Ռուսաստանի ներքին գործերի նախարարության եւ Հայաստանի ոստիկանության միացյալ կոլեգիայի նիստից հետո լրագրողներին հայտնել է ՌԴ ներքին գործերի նախարար Բորիս Գրիզլովը:

«Հատկապես վտանգավոր հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչությունից ստացված օպերատիվ տվյալներով, մենք պարզեցինք այն մի խումբ անձանց, որոնք մեղսակից են սպանության կատարմանը: Նրանց թվում կան հայազգի ներկայացուցիչներ», պարզաբանել է նա: Ուստի երկու երկրների իրավապահ մարմինները համատեղ աշխատանք են սկսել: Գրիզլովն ընդգծել է, որ կասկածյալներից մեկն արդեն ձերբակալված է եւ նրան մեղադրանք է ներկայացված Ցվետկովի սպանության կազմակերպման համար:

Մագադանի մարզի նահանգապետը 2002 թվականի հոկտեմբերի 18-ին սպանվել է Մոսկվայում՝ Նովի Արբատում:

Կանադայի խորհրդարանական պատվիրակությունը կայցելի Հայաստան

Առաջիկա հուլիսի 1-7-ը Հայաստան կայցելի Կանադայի խորհրդարանի պատվիրակությունը, բաղկացած Սարգիս Ասատուրյանից, Մարիո Մինաջից, Ռայմոնդ Սիմարդից եւ Դեյվիդ Սմիթից: Այցի նպատակն է, ինչպես տեղեկացնում է Կանադայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Ս. Ասատուրյանի գրասենյակը, հանդիպել Հայաստանի խորհրդարանի անդամների եւ կառավարության ներկայացուցիչների հետ, միջխորհրդարանական պատվիրակությունների փոխանակման ծրագրի շրջանակներում:

Այս կապակցությամբ «Ազգի» ստացած հաղորդագրությունը շեշտում է, որ պատվիրակության Հայաստան այցի իրականացման գործում մեծ է եղել Կանադայում ՀՀ դեսպան Արա Պապյանի ներդրումը: «Միջխորհրդարանական փոխանակման ծրագիրը եզակի առիթ է ընձեռում երկու երկրների խորհրդարանականներին մոտիկից ծանոթանալու եւ հայացքներ փոխանակելու քաղաքական կառույցների մասին՝ ի խնդիր երկու երկրների միջեւ կապերի ուժեղացման:

2 իրաքցի եւ 1 ամերիկացի սպանվեցին Բաղդադում հակամերիկյան ցույցերի ընթացքում

Մինչ իրական զինված դիմադրությունն, ըստ արեւմտյան աղբյուրների, հետզհետե կազմակերպված կերպարանք է ստանում, երեկ Բաղդադում առանձին 2 միջադեպերի ընթացքում մահացան 2 իրաքցի նախկին բանակայիններ եւ ամերիկացի 1 զինվոր: Առաջին դեպքը պատահեց Իրաքի ամերիկացի ժամանակավոր կառավարչի պալատի առջեւ իրաքցի բանակայինների բողոքի ցույցի ժամանակ, երբ ամերիկացի պահակները կրակ բացեցին ցուցարարների վրա, որոնք պահանջում էին վերականգնել իրենց զինծառայողի կարգավիճակը եւ վճարել 3 ամսից ի վեր հայտնի պատճառներով չվճարվող աշխատավարձը: Ամերիկյան պաշտոնական աղբյուրների պնդմամբ, ամերիկացիները կրակ են բացել այն բանից հետո միայն, երբ ցուցարարները քարկոծել են ամերիկյան զինվորական ավտոմեքենան: Սակայն ականատես իրաքցիները ժխտում են դա:

Մյուս դեպքը պատահեց գազալցման կայանի մոտ, որտեղ քաղաքացիների մեծ հերթ էր գոյացել եւ ամերիկացիները փորձում էին կարգուկանոն հաստատել: Դեռեւս չպարզված հանգամանքներում իրաքցիներից մեկը հրազենից կրակ է բացել զինվորների վրա, որոնցից մեկը սպանվել է տեղում:

Ինֆլյացիոնիստներ Լոնդոնում

Նախորդ համարում տեղեկացրել էինք «Մոջահեդին ալ Խալք» իրանյան ընդդիմադիր կազմակերպության 158 ակտիվիստների Փարիզում ձերբակալման մասին: Երեկ եվրոպական գրեթե բոլոր մայրաքաղաքներում Իրանի ներկայիս վարչակարգի դեմ ելնող իրաքցիները բողոքի ցույցեր կազմակերպեցին ֆրանսիական իշխանությունների այդ գործողության դեմ, պահանջելով ազատ արձակել ձերբակալվածներին: Լոնդոնում տեղի ունեցող ցույցի մասնակիցներից 2 կանայք որպես բողոքի գերագույն արտահայտություն բենզին լցրեցին իրենց գլխին եւ ինքնահրկիզվեցին: Վրա հասած ոստիկաններին թեեւ հաջողվեց հրդեհը հանգցնել, սակայն ավելի ուշ երկուսն էլ մահացան հիվանդանոցում:

Դատարանը ազատ արձակեց Ֆրանսիայի գլխավոր ֆինանսիստին

Ֆրանսիական «Կրեդի լիոնե» բանկի սնանկացման հարցում անպարկեշտ դերակատարություն ունենալու մեղադրանքով փետրվարից ի վեր ձերբակալված Ֆրանսիայի կենտրոնական բանկի կառավարիչ Ժան Փոլ Թրիշեն երեկ Փարիզի դատարանի վճռով անմեղ հռչակվեց ու ազատ արձակվեց: Նախագահ Ժակ Շիրակն իսկույն հայտարարեց, որ Թրիշեն մնում է խ գլխավոր թեկնածուն առաջիկա ամսում Ֆրանկֆուրտում եվրամիության կենտրոնական բանկի կառավարչի պաշտոնի համար: Նշյալ պաշտոնը ստանձնելու դեպքում հարգված ֆինանսիստն իրեն կարող է երկակի բախտավոր համարել: Առաջին՝ ճիշտ ժամանակին ազատվեց կալանքից եւ երկրորդ՝ եվրոյի գործերն այժմ զգալիորեն լավ են ԱՄՆ դոլարի համեմատությամբ:

«Օգտագործեք արեւային ջրատաքացուցիչներ»

Կոչ արեց «Գրանդ հոլդինգի» ղեկավարը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Երեկ «Գրանդ սան» ընկերությունում լրագրողներին ներկայացվեց արեւային ջրատաքացուցիչ, որն առայժմ ներմուծվում է Իրանից, բայց առաջիկայում կարտադրվի այստեղ: «Գրանդ սանի» ներկայացուցիչը նշեց, որ այդ սարքը ստեղծվել է ակադեմիկոս Պարիս Հերունու մտահղացմամբ: 180 լ ջուրն այս սարքի շնորհիվ կարելի է տաքացնել մինչեւ 70-80 աստիճան, իսկ ամպամած եղանակին՝ մինչեւ 40-45 աստիճան: Արժե 400 դոլար: Ինչպես նշեց «Գրանդ հոլդինգի» նախագահ Հրանտ Վարդանյանը, տեղում արտադրելու դեպքում ջրատաքացուցիչը 25 տոկոսով էժան կլինի: Սկզբնական շրջանում այդ սարքավորումները 6 ամսից մինչեւ 1 տարի ժամկետով կտրամադրվեն ընտանիքներին, որոնք ցանկության դեպքում այդ ժամկետից հետո կարող են գնել դրանք:

Հրանտ Վարդանյանը կոչ արեց լրագրողներին քարոզել, որ ժողովուրդն օգտվի արեւային ջրատաքացուցիչներից, ինչն էական տնտեսում կլինի: Համաձայն ներկայացրած հաշվարկների, երեք տարբերակների դեպքում, երբ 1 մարդուն օրական անհրաժեշտ է 25 լ, 50 լ եւ 100 լ ջուր, ամբողջ հանրապետությունում արեւային ջրատաքացուցիչների օգտագործման դեպքում համապատասխանաբար կխնայվի տարեկան 40 մլն, 69 մլն եւ 119 մլն դոլար: Տեղեկացվեց նաեւ, որ արդեն ստեղծվել է ջրատաքացուցիչների տեղադրմամբ եւ սպասարկմամբ զբաղվող մասնագետների խումբ, որոնք ապահովված են բոլոր կոմպլեկտավորող պահեստային սարքավորումներով:

Տես էջ 3

ԸՆԹԱՑԻԿ

ԱՍՈՒԼԻՍ

«Իմ կեղծ ընդդիմադիր լինելու մասին լուրերը ՀՀԾ-ն է տարածել»

Արտաշես Գեղամյանը համոզված է, որ նախագահի վստահության հանրաքվեն անցկացվելու է

Երեկ ԱԺ «Ազգային միաբանություն» խմբակցության անդամներն Արտաշես Գեղամյանի գլխավորությամբ մամլո ասուլիս էին հրավիրել՝ հայտարարելու, որ հեռուստաընկերություններ չեն լինելու «հանրաքվեության նախագահի վստահության հանրաքվե անցկացնելու ՀՀ ՍԴ երաշխավորությունն ի կատար ածելու»:

Պրն Գեղամյանը վստահեցրեց, որ եթե ԱԺ մեծամասնությունն այս նախաձեռնությանն ընթացք չտա, «Ազգային միաբանությունը» սեպտեմբերի վերջին վստահության հանրաքվե անցկացնելու պահանջով:

«Հույս ունեմ, որ Ռոբերտ Քոչարյանն ինքն էլ հանդես կգա նման առաջարկությամբ, քանի որ անօրինական կերպով 5 տարի իշխանությունը պահել հնարավոր չէ: Նա չի կարողանա Հայաստանը ներկայացնել միջազգային ասպարեզում, այդ թվում նաեւ ԼՂ խնդրի առումով: Այնպես որ, վրա հասնող վտանգից՝ Հայաստանի Հանրապետության խայտառակությունից եւ ԼՂ ուրջ աղետալի զարգացումներից մեզ կարող են փրկել երկրում ժողովրդավարական սահմանադրական կարգերի հաստատումը եւ օրինական իշխանությունների ձեւավորումը», նշեց Ա. Գեղամյանը: Նրա հոնկայս ընթերցած հայտարարությունը, որ հարուստ էր վրեժխնդրություն, նենգություն, նզովք, երախտամոռություն, աղերախտություն ու նման այլ բառերով, քաղաքական գնահատական է տալիս նաեւ մայիսի 25-ի խորհրդարանական ընտրություններին: «Զանգվածային ընտրակեղծիքներով ձեւավորված ԱԺ ղեկավարների նշանակմամբ Հայաստանում արմատախիլ արվեցին 90-ականներին նշմարվող ժողովրդավարության ծիլերը»:

Լրագրողների հարցին, թե ինչպե՞ս է մեկնաբանում իր՝ կեղծ ընդդիմադիր գործիչ լինելու մասին խոսակցությունները, Ա. Գեղամյանը պատասխանեց, որ ժամանակին՝ նախագահական ընտրություններից առաջ, այդ լուրերը տարածեց ՀՀԾ-ն: «Բայց երբ նրանք սպացան այն, ինչ սպացան, այդ ասեկոսեները փոքր-ինչ նահանջեցին»:

Արտաշես Գեղամյանը համոզված է, որ երկրում տեղի ունեցող երեւույթների մասին իր եւ «Ազգային միաբանություն» կուսակցության գնահատականները նկատի առնելով իրեն կեղծ ընդդիմադիր անվանելու համար պետք է առնվազն քաղաքականապես անգրագետ լինել»:

Լ. Գ.

«Հասարակության ճնշումը չզգալու դեպքում իշխանություններն անում են այնպես, ինչպես իրենց է հարմար»

Սկիզբը էջ 1

– Ներկայիս կազմով ինչպիսի՞ն եք տեսնում երրորդ գումարման խորհրդարանի գործունեությունը:

– Հանրապետականներն իրենց հարաբերակցի ընթացքում նշում էին, թե ԱԺ օրենսդրական նախաձեռնությունների 90 տոկոսն իրենք են ներկայացրել: Մի փոքր ճշգրտում է պետք. ոչ թե կուսակցությունն է ներկայացրել, այլ ըստ էության կառավարությունը՝ հաշվի առնելով ուժերի դասավորությունը:

Ես վախենում եմ, որ նոր ձեւավորված խորհրդարանը դառնալու է կառավարության օրենսդրական նախաձեռնությունների դակիչը: Կարծես թե այստեղ այդքան էլ մեծ վտանգ չկա՝ ի վերջո ի՞նչ տարբերություն, թե որտեղ է մշակվում օրենքը: Սակայն կա սկզբունքային սխալ, որը հնարավոր չի լինելու հաղթահարել: Գործադիր իշխանությունը պետք է ղեկավարվի այն օրենքներով, որոնք հաստատում է մեկ այլ մարմին: Չի կարելի թույլ տալ, որ գործադրին վերապահվի նաեւ օրենսդրի գործառույթը:

Նախորդ խորհրդարանի արտահերթ նիստերը ցույց տվեցին, որ օրենսդիրը կարող էր նիստի ընթացքում 40-60 օրենք ընդունել, այնինչ այդքանը նույնիսկ կարդալ հնարավոր չէ: Տպավորությունն այն է, որ նախորդ Ազգային ժողովի քերությունները ուղղակի ավելի արտահայտիչ են դարձել:

– Մինչեւ ընտրությունները հույս կար, նաեւ խոստումներ, որ ընտրությունները նպաստելու են իշխանական համակարգի մաքրմանը եւ ժամանակի ընթացքում...

– Սխալ մոտեցում է, որ ժամանակի ընթացքում ամեն ինչ կկարգավորվի: Նման հեքիաթներ լսել ենք կոմունիզմի ուժը կբերի դեպի պայծառ ապագա, հետո հեքիաթ ազատ շուկայական հարաբերությունների ճանապարհով կյանքը լավացնելու մասին: Սխալ է կարծել, թե մակընթացավորները կսկսեն կարդալ: Ներեցեք կոպիտ համեմատության համար, դա նույնն է, որ ասես հիվանդին վիրահատություն անհրաժեշտ չէ, քարախն ինքն իրեն դուրս կգա օրգանիզմից: Ո՛չ, դա խորանալու է, եթե ոչինչ չարվի: Հարկավոր են արմատական միջոցներ, նկատի ունեմ, որ հասարակությունն ու իշխանությունները պետք է միավորվեն, միասնական կամք պետք է լինի:

– Հասարակությունը պասսիվ կեցվածք է ընդունել, մտավորականությունը կարծես համակերպվել է ստեղծված իրավիճակի հետ:

– Մտավորականության կողմից մամուլում կան լուրջ գաղափարներ, հրապարակումներ շատ են լինում: Այլ խնդիր է, որ մտավորականությունը չունի դրանք իրականացնելու լծակներ:

Հասարակությունը, կարծում եմ, եւս պասսիվ չէ: Նա գնում է ընտրությունների, գործընթացին մասնակից է դառնում, բայց էվեարկում է ոչ թե այնպես, ինչպես ինքն է ուզում, այլ այնպես, ինչպես պարտադրում են, կամ իր ձայնը հանում է աճուրդի: Իսկ եթե հասարակական պահանջը չկա, ինչու պետք է իշխանությունները մտածեն այդ ուղղությամբ: Հասարակության ճնշումը չզգալու դեպքում իշխանություններն անում են այնպես, ինչպես իրենց է հարմար:

Ընտրախախտումներն էական չեն եղել թիվ 20 ընտրատարածքում

Ըստ ՍԴ-ի

Սահմանադրական դատարանն արդեն որերորդ օրն է սկսում եւ ավարտում է խորհրդարանական ընտրությունների արդյունքների հետ կապված դիմումների քննարկումները:

Երեկ դատարանը լսեց թիվ 20 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Մյասնիկ Մալխասյանի դիմումը՝ թիվ 20-ում ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու պահանջով:

Այս ընտրատարածքում անկուսակցական Մյասնիկ Մալխասյանին հաղթել է անկուսակցական Լյովա Խաչատրյանը՝ ստանալով 18 հազարից ավելի ձայներ: Սա այն դեպքում, երբ Մյասնիկ Մալխասյանը ստացել է մոտ 8900 ձայն, իսկ անճշտությունները կազմել են 200-ից ավելի:

Ըստ դիմումատուի, Լյովա Խաչատրյանը որպես պատգամավորության թեկնածու գրանցվելիս, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրել է փաստաթուղթ ոչ թե վերջին 5 տարվա մշտական բնակության, այլ հաշվառված լինելու մասին:

Մինչեւ էվեարկության օրը նշված հանգամանքի կապակցությամբ դիմում-բողոք է ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Սակայն հանձնաժողովը, քննարկելով դիմում-բողոքը, մերժել է Լյովա Խաչատրյանին որպես պատգամավորության թեկնածու գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը:

Մյասնիկ Մալխասյանի ներկայացմամբ, թիվ 20 ընտրատարածքում եղել են բազմաթիվ խախտումներ՝ ինչպիսիք են ընտրացուցակներում մահացածների անունների առկայությունը, էվեստուփեր լցնելը եւ այլ հանգամանքներ: Ի դեմ, Մալխասյանի խոսքերով, Լյովա Խաչատրյանի «քարոզարշավին» մասնակցություն են ունեցել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Աղվան Հովսեփյանը, Արագածոտնի մարզային ոստիկանության բաժնի աշխատակիցներ:

Թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացմամբ, նշված մարդկանց կողմից Լյովա Խաչատրյանին սատարելու ապացույցներ չկան: Ինչ վերաբերում է դիմում-բողոքներին, ապա դրանց արդյունքում ստուգումներ են եղել պահանջված 13 տեղամասերից միայն 2-ում: Որպես հետեւանք թեկնածուների միջեւ ձայների տարբերությունը կրճատվել է 1700-ով:

Տեսակետների փոխանակումը հասավ անտեղ, որ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը զգուշացրեց Մյասնիկ Մալխասյանին, որ խոսի ըստ էության: Ի պատասխան Մյասնիկ Մալխասյանը հայտարարեց, որ Սահմանադրական դատարանը քաղաքական պատվեր է կատարում: Այնուհետեւ ցուցադրաբար իր համախոհների հետ լքեց նիստերի դահլիճը:

Մալխասյանի փոխարեն դահլիճում մնաց Արտակ Զեյնալյանը՝ որպես ներկայացուցիչ:

Ինչեւէ, Սահմանադրական դատարանը որոշեց, որ թիվ 20 ընտրատարածքում տեղի ունեցած խախտումներն էական չեն եւ չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա: Այսպիսով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ Լյովա Խաչատրյանի պատգամավոր ընտրվելու մասին որոշումը մնաց անփոփոխ: Դատարանը որոշեց նաեւ գործում առկա ընտրախախտումների մասին նյութերը տրամադրել դատախազությանը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԸՆԴՐՀԱՆՈՒԹ

Մոնթեն միայն զենքի մարդ չէր



Երեկ ժուռնալիստի տանը կայացավ «Պայքարելու իրավունքը» գրքի շնորհանդեսը: «Մոնթե Մելիքոնյան» հասարակական կազմակերպության հրատարակությամբ եւ Մարգար Մելիքոնյանի ջանքերով կազմված գիրքը հայոց ազգային հարցի մասին Մոնթե Մելիքոնյանի գրվածքների ընտրանին է: Գիրքը 1990 եւ 1993 թթ. լույս է տեսել անգլերեն, իսկ Մոնթեի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ հրատարակվեց հայերեն: Ընտրանիում խմբված աշխատությունները, հոդվածներն ու նամակները հեղինակը գրել է 1981-91 թթ., հիմնականում (1984-89 թթ.) ընդհատակում ապրած եւ բանտարկության տարիներին՝ մինչեւ արցախյան շարժումը եւ 1991 թ.-ից հետո:

Ինչպես տեղեկացրեց Ալեք Ենիգոմշյանը, «Մոնթեն միայն զենքի մարդ չէր, վկան նրա թողած հարուստ ժառանգությունն է, որն ամփոփված է այս գրքում, իսկ մնացյալ անտիպ էջերը կհրապարակվեն առաջիկայում»:

Մոնթե Մելիքոնյանն, անդամագրվելով «Հայաստանի ազատագրման հայկական գաղտնի բանակին» (ASALA-ՀԱՀԳԲ), գաղտնի տեղափոխվում է Բեյրութ եւ հաճախ հանդես գալիս «Հայաստան» պարբերականի էջերում: Այսօր Մոնթեի բազմաթիվ նամակներ վկայում են, որ «ազգային-ազատագրական պայքարին մասնակցելու լավագույն ձեւն այդ պայքարի առաջին գիծ գնալն ու մասնակցելն է»: «Ես այսօր այստեղ եմ, Արցախում, որովհետեւ իրավունք չունեմ ուրիշ տեղ լինելու: Արցախը կորոշի հայության ճակատագիրը»:

Մոնթեի աշխատությունները հիմնականում շոշափում են Արեւելք-Արեւմուտք հակադրության, ինչպես նաեւ Թուրքիայում հակաթեսական եւ քրդական ազատագրական պայքարի պայմաններում հայոց հայրենիքի ազատագրության, սփյուռքահայերի այդ հողերում վերաբնակվելու եւ քաղաքական ինքնիշխանության տարբեր ձեւերի հաստատմանը վերաբերող հարցեր: Այդ ամենը Մոնթե Մելիքոնյանն ուսումնասիրել է մեթոդաբանական, ռազմավարական, կազմակերպչական եւ այլ տեսանկյուններից՝ ելնելով հայերի ազգային ինքնորոշման իրավունքի մասին իր անխախտ համոզումներից ու աշխարհայացքից:

Գրքում առանձին տեղ է հատկացված Մոնթեի գրառումներին արցախյան հարցի շուրջ, գրված շարժման առաջին փուլում՝ 1988-ին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Փորձեր են արվում պետական մակարդակով կազմակերպելու արտագնա աշխատանքը

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչությունը մտադիր է պետական մակարդակով արտագնա աշխատանք կազմակերպել Իսպանիայում: Այս նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան կառույցին: Վարչության պետ Գագիկ Եգանյանի խոսքերով, դա լինելու է սեզոնային աշխատանք: Նշենք, որ առաջին անգամ է փորձ արվում պետական մակարդակով կարգավորելու արտագնա աշխատանքի հարցը: Այսօր Հայաստանում բազմաթիվ են այն ընկերությունները, որոնք կազմակերպում են արտագնա աշխատանք տարբեր երկրներում, որը, մասնագետների հավաստմամբ, հաճախ հանգեցնում է մարդավաճառության:

Դիտորդները դրական են գնահատել հունիսի 14-ի եւ 15-ի վերաքվեարկությունները

Ինչպես երեկ տեղեկացրեց ԿԸՀ լրատվական ծառայությունը, ԿԸՀ նախագահ Արտակ Սահրադյանը հունիսի 18-ին ընդունել է հունիսի 14-ին եւ 15-ին թիվ 12, 29 եւ 41 ընտրատարածքներում կայացած վերաքվեարկության ընթացքին հետեւող ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության պատվիրակներին՝ Յան Գորվինի ղեկավարությամբ: Հանդիպման ընթացքում Յան Գորվինն Արտակ Սահրադյանին տեղեկացրել է, որ առաքելության անդամները գրեթե բոլոր ընտրատեղամասերում հետեւել են վերաքվեարկությանը եւ գնահատել են դրական: Երեք ընտրատարածքների վերաքվեարկության հաշվետվությունն, ըստ առաքելության ղեկավարի, արդեն ուղարկվել է Վարշավա եւ կհրապարակվի որպես 5-րդ միջանկյալ հաշվետվություն: Հաշվետվությունում ընդգծվել է վերաքվեարկության դրական առաջընթացը:

Ա. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խուտ: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
Համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

ՈՐՊԵՍԶԻ ԾԱՌԵՐԸ ՉՀՈՐԱՆԱՆ

Սառույցը սկսում է հալվել

Գիտական նորույթը կյանք ներդնելու առաջին փորձերն են արվում

Ամեն տարի գարնանը Երեւանի այս կամ այն հատվածում ծառատունկերի, անտառ-այգի ու անտառտուրակներ հիմնելու փորձեր են արվում: Այս տարի Ծիծեռնակաբերդում ավանդական ծառատունկը եղավ: Սակայն դժվար թե այս ձեռնարկումների հեղինակներն իսկապես ոգեւորված էին իրենց նախաձեռնությամբ: Մինչ հաջորդ տարի նորատունկերի չնչին տոկոսն է պահպանվում: Ոռոգման ցանցի, անբավարար ջրամատակարարման պատճառով ծառերը չորանում են:

Գիտնականների խմբի առաջարկած նորությունը կոչված է նաեւ նորատունկ անտառների ու այգիների փրկությանը: Նորույթը, որ պատկառելի տարիքի համար արդեն դժվար է այդպիսին անվանել (դրա ստեղծման աշխատանքներն սկսվել են դեռ 1984 թ.), «Հույսիսն» է՝ պոլիմերների եւ ոչ տոքսիկ, հանքային նյութերի խառնուրդը: Այն մշակել են ՀՀ ԳԱԱ գիտնականները. մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, ֆիզիկոս Մեժլում Երիցյանը, գյուղատնտես ակադեմիկոս Կարեն Պողոսյանը, երկրաբանության ինստիտուտի բնական գիտությունների բաժանմունքի նախագահ Սերգեյ Գրիգորյանը եւ ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զրբաշյանը: Աշխատանքային խումբը ղեկավարում է ինստիտուտի գեոէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ Ռուբեն Յադոյանը: Այն հաստեցված է միանգամից 3 ասպարեզների՝ գյուղատնտեսություն, շինարարություն եւ բնապահպանություն: Երեքի համար էլ ամենատարբեր արտահայտություններով նույն հիմնախնդիրը՝ հողերի ամրացումը, կամ երաշտի դեպքում վարելահողերում օպտիմալ խոնավության պահպանումը, տարիներ լուծում չգտնելով, ֆինանսական ու նյութական մեծ կորուստների պատճառ է դարձել:

Գիտությունների ազգային ակադեմիայում ՀՀ վարչապետի խորհրդական Վլադիմիր Մովսիսյանի մասնակցությամբ քննարկվեցին «Հույսիսն» արտադրություն ներդնելու եւ նշված բնագավառներում կիրառելու հետ կապված հարցերը: Ի դեպ, արդյունավետության վաղուց հաստատված հայտանիշներ ներկայացնող եւ տասնամյակներ համառորեն անուշադրության արժանացող այս նյութի մասին **«Ազգն»** էլ է հրապարակել: Այս քննարկումը միակը չէ, որ վկայում է գիտական այս նորույթի հանդեպ վերաբերմունքի փոփոխության մասին: Սառույցը կարծես թե սկսում է հալվել: Երկու շաբաթ առաջ նույնօրինակ քննարկում էին կազմակերպել նաեւ ակադեմիայի բնական, տեխնիկական եւ երկրի մասին գիտությունների բաժանմունքների մասնագետները:

Պոլիմերահանքային այս համակազմը յուրօրինակ հաստություն ունի. հողում ջրի առկայության դեպքում կլանում է այն եւ պահում՝ առանց գոլորշիացնելու: Հետաքրքրական է, որ իր ծավալին համարժեքորեն բազմապատիկ ծավալի ջուր կլանելուց հետո լրացուցիչ ֆանակ էլ չի ներծծում, եւ հողը ողողած անձրեւաջրերը պարզապես հեռանում են: «Հույսիսով» պատստանված բույսի համար երաշտն էլ սարսափելի չէ:

«Հույսիսի» առաջին հայտատուները «Մասիս տոբակո» ծեռնարկությունը եւ Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնն են: Կոտայքում «Հույսիսը» փորձարկվելու է խնձորի այգիներում: «Մասիս տոբակոն» Նոյեմբերյանի Կոթի գյուղում ծխախոտի ցանքերի 5 մեծ տեղամաս արդեն մշակել է այս խառնուրդով:

Նորույթը հանձնարարելի է հատկապես նորատունկ ծառերի համար, հենց առաջին տարում աճի սկզբից բավարար պայմաններ ապահովելու դրանց: Նաեւ այս տարվա գրտերից տուժած ծառերը վերականգնելու համար գիտնականներն առանց ցնցումների կենսաճ երաշխավորում են դարձյալ «Հույսիսի» օգնությամբ:

Առայժմ կենսաբեր խառնուրդը ստացվում է լաբորատոր պայմաններում, սահմանափակ քանակությամբ: Դրանից է բաժին հանվել Կոտայքի այգիներին ու Մասիսի ծխախոտի ցանքերին: Ծառի տարիքի հետ «Հույսիսի» քանակությունն ավելացվում է՝ նորատունկ ծառի համար անհրաժեշտ է 100-200 գրամ, իսկ մինչեւ ծառի պտղատու դառնալը այդ քանակն ասպիճանաբար պիտի հասնի 1 կգ-ի:

Կանխավ «Հույսիսը» ստացվում էր ճապոնական, ամերիկյան, գերմանական ու ուկրաինական պոլիմերների հիման վրա, որ բավական թանկ էր: Օրինակ, ճապոնական պոլիմերի 1 տոննան առաջարկվում էր 2500 դոլարով: Այս տարվանից արդեն օգտագործվում է պրոֆ. Երիցյանի հայտնաբերած պոլիմերը, որի 1 տոննայի արտադրությունը ամենաբարձր հաշվարկներով 1200 դոլարից չի անցնում:

Գիտնականների եւ կառավարության ներկայացուցչի մասնակցությամբ երկու քննարկումներում առաջարկ եղավ դիմել Հայաստանի կառավարությանը եւ Ռուսաստանի հայերի միությանը (վերջինս մտադիր է գյուղատնտեսական լայնածավալ աշխատանքներ իրականացնել Հայաստանում)՝ «Հույսիսի» արտադրության կազմակերպումը ֆինանսավորելու խնդրանքով:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Օգտագործեք արեւային ջրատաքացուցիչներ»

Սկիզբը՝ էջ 1

Ասուլիսի ժամանակ «Գրանդ հոլդինգի» նախագահն անդրադարձավ նաեւ ընկերության կողմից իրականացվող այլ ծրագրերին: Դրանցից մեկն արեւային էլեկտրակայանի ստեղծումն է, որի հեղինակը դարձյալ ակադեմիկոս Հերունին է: Կայանն արդեն պատրաստ է մոտ 70 տոկոսով: Եկող տարի այս փորձնական ծրագիրը կավարտվի:

Հաջորդը կենսագազերի օգտագործման ծրագիրն է գյուղական բնակավայրերում: Այն գյուղացիները, ովքեր 5-ից ավելի անասուններ ունեն, կարող են ունենալ համապատասխան սարքավորումը: Այն թույլ է տալիս գոմաղբից 4 օրվա ընթացքում ստանալ ազոտական պարարտանյութ: Նման եղանակով կենսագազ ստանալը մաքուր է, չի աղտոտում շրջապատը եւ տհաճ հոտեր չի առաջացնում:

«Գրանդ հոլդինգը» նպատակ ունի ձեռք բերել նաեւ Վանաձորի քիմիական համալիրը: Հրանտ Վարդանյանը հայտնեց, որ ինքը բանակցել է Սենիկ Գեւորգյանի հետ, եւ շուտով այդ գործարքը կլինի:

Սկզբնական շրջանում քիմիամալիրը կարտադրի ացետիլային ժապավեն (ժգուտ) ծխախոտների համար, կարբիդ եւ կորունդ: Կարեւորվեց այն հանգամանքը, որ Հայաստանը կունենա իր կարբիդը: Առայժմ քիմիամալիրը չի արտադրի մելամին: Արտադրելու փորձ մասնավորեցումից հետո կատարվել է, բայց ինքնարժեքը բարձր է ստացվել:

Կոնկրետ «Գրանդ սանի» գործունեության եւ ծրագրերի մասին խոսելով, ի պատասխան մեր հարցի Հրանտ Վարդանյանն ասաց, որ այդ ծրագրերը կատարվում են, պարզապես հետ են մնում նախապես նշված ժամանակացույցից: Նա նաեւ տեղեկացրեց, որ մեծ դժվարություններից հետո Իրանում (Թավրիզում) վերջապես ստեղծվեց լամպերի արտադրության համատեղ ձեռնարկություն: «Հաղթահարեցինք նաեւ պարսկական բյուրոկրատիան», նշեց «Գրանդ հոլդինգի» ղեկավարը եւ ավելացրեց, որ այս ձեռնարկության ստեղծումը նոր շունչ կտա «Գրանդ սանին»: Վերջինիս արտադրանքի սպառման. կարեւոր շուկա է Իրանը:

Պատասխանելով հարցերից մեկին, Հրանտ Վարդանյանը հպանցիկ անդրադարձավ հացի գների թանկացմանը, ասելով, որ ինքը որպես քաղաքացի այդպես էլ չհասկացավ, թե ինչու դա տեղի ունեցավ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ուշացած համագործակցություն

Հասարակական կազմակերպությունների համագումար՝ ՀՀ նախագահի հովանավորությամբ

Հասարակական կազմակերպությունների թիվը Հայաստանում նկատելիորեն աճեց վերջին տարիներին: Գրանցված են մոտ 3 հազար հասարակական կազմակերպություններ, որոնց մեջ փիլ չեն ափսանքային մեծ փորձառությամբ ապրի ընկնողները: Գործուն համագործակցություն հաստատելով գործադիր մարմինների եւ ՁԼՄ-ների հետ, միջազգային դրամաշնորհային ծրագրերի օգնությամբ նրանք օգտակարության իրենց գործակիցն են բերել մեր հասարակական կյանքում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը: Այդօրինակ հասարակական կազմակերպություններում ընդգրկված են տարբեր բնագավառների հմուտ մասնագետներ, որոնց բարձրակարգ գիտելիքներն էլ հաջողություններ գրանցելու հիմնական նախադրյալներն են դարձել:

Ահա այս կարեւոր հանգամանքն էլ նկատի ունենալով Հայաստանի իշխանությունը, թեկուզ արդեն ուշացած, սակայն լավ է ուշ, քան երբեք սկզբունքով որոշել է հատուկ ուշադրություն հատկացնել ՀԿ-ների գործունեության համակարգմանը: Այդ նպատակով հանրապետության նախագահի անմիջական հովանավորությամբ աշնանը կիրավիրվի հասարակական կազմակերպությունների համագումար: Կստեղծվի համակարգող խորհուրդ, որն էլ կկրի բոլոր անհրաժեշտ պարտավորությունները՝ հանրապետության նախագահի, կառավարության եւ օրենսդիր մարմինների հետ համագործակցություն հաստատելու համար: Իսկ երեկ կայացավ նախագահի խորհրդական Ռազմիկ Դավոյանի հանդիպումը համագումարի աշխատանքները նախաձեռնող խմբի հետ:

Խմբում ընդգրկված են հետեւյալ կազմակերպությունները՝ «Հայկական սոցիոլոգիական ընկերակցություն» (նախագահ՝ Գեւորգ Պողոսյան), «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն (Հակոբ Աբրահամյան), «Համագործակցություն» (Եկատերինա Սիմոնյան), «Հայաստանի մայրության ֆոնդ» (Սուսաննա Ասլանյան), «Մեղվիկ» մանկապատանեկան (Վեհանուշ Հովհաննիսյան), «Ընդդեմ իրավական բռնության» (Լարիսա Ալավերդյան), «Զինվորի մայրը» (Գրետա Միրզոյան), «Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» (Սեյրան Մարտիրոսյան), «Շիրակի մարզի ՀԿ-ների միություն» (Մկրտիչ Ճարտարյան), «Հայաստանի առաջադեմ երիտասարդական միություն» (Տիգրան Ուրիխանյան), «Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» (Ռոմանիա Յավիր), «Առաքելություն Հայաստան» (Հռիփսիմե Կիրակոսյան), «Սոֆիտակ» փրկարարական ջոկատ (Գեւորգ Մանթաշյան), «Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ազգային կենտրոն» (Վլադիմիր Կարմիրշալյան):

Ի դեպ, երեկվա հանդիպմանը ոչ բոլորն էին ներկա: Նրանց բացակայությանը հանգիստ հայացքով նայելը հավանաբար կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նրանք իշխանության չեն ձգտում, ֆինանսապես անկախ են՝ պատրաստ նվիրվելու հասարակությանն ու օգնելու իշխանությանը: Այնպես որ, ավելի լավ գործընկերներ դժվար է պատկերացնել: Պատահական չէր, որ պրն Դավոյանը նրանց դերն անչափ կարեւորեց նաեւ ընդդիմադիր դաշտի ու ԱԺ պատգամավորների հետ աշխատանքներում:

ՀԿ-ների դերն ու կատարած գործերն ավելի ակնհայտ են մարզերում, քանի որ դրանցում բազմաթիվ են տեղական խնդիրների լուծմամբ մտահոգ անձինք: Հենց նրանց շնորհիվ էլ առաջիկայում գուցե իրագործելի դառնան բաց թողնված շատ ու շատ ծրագրեր:

Համագումարը նախաձեռնող խումբը ուղերձ է հղել Հայաստանի բոլոր հասարակական կազմակերպություններին՝ տեղերում հանդիպումներ, քննարկումներ կազմակերպելու եւ իրենց ներկայացուցիչներին առաջադրելու, իսկ մարզպետներին՝ նրանց աջակցություն ցուցաբերելու:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտների նպաստը Հայաստանի արտադրողներին

Հունիսի 20-ին, ժամը 19.30-ին «Ավան վիլա Երեւան» համալիրում (հասցեն՝ Նորք-Մարաշ, 13-րդ փողոց, շ. 16) տեղի կունենա հայկական գյուղատնտեսական արտադրների (գինի, պանիր, հյութեր եւ այլն) շնորհանդես եւ համտես՝ կազմակերպված Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) շրջանավարտների կողմից: ԱՄՆ գյուղատնտեսության «Մարկետինգի աջակցության ծրագրի» եւ «Թուֆենկյան հուսիիբալիքիի» աջակցությամբ իրականացվող այս միջոցառումն ունի մի քանի նպատակ: Բացի հանդիպելու եւ շփվելու ուրախալի առիթից, ՀԱՀ-ի շրջանավարտները կիրավիրեն հանրության ուշադրությունը մեր երկրում գործող արտադրողներին եւ նրանց արտադրանքին:

ՀԱՀ-ի շրջանավարտների համար նման իրադարձությունները նաեւ առիթ են արտահայտելու իրենց երախտիքը հարազատ համալսարանին: Այս միջոցառումները դարձել են ավանդույթ ՀԱՀ-ն ավարտած երիտասարդների համար, քանզի առաջին անգամը չէ, որ նրանք հանդես են գալիս նման նախաձեռնություններով՝ հարազատ համալսարանին շնորհակալություն հայտնելու եւ օգնելու նպատակով:

Միջոցառման ընթացքում կներկայացվեն գինի, պանիր, մսամթերք եւ հյութեր արտադրող տեղական ընկերությունների արտադրած ապրանքները («Վեդի ալկո», «Արենի», «Գինետան», «Իջեւանի գինու գործարան», «Դուստր Մելանյա», «Ոսկե այծ պլյուս», «Որդի Արմեն», «Աքենք», «Նոյան» եւ այլն): Ներկա կլինեն ԱՄՆ դեսպանատան, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, «Կոկա-կոլայի» եւ այլ միջազգային ու տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ պատգամավորներ:

Շնորհավորանք

Սիրելի բարեկամին, ազնվագույն մարդուն, հայրենիքի անմնացորդ նվիրյալին՝ ՀՀ ԶՈՒ գնդապետ Ոսկանիկ Վասիլիի Ադոյանին ծննդյան օրվա առթիվ շնորհավորում են հարազատները, բարեկամները, գինակիցները:

Մաղթում են նրան քաջառողջություն, երջանկություն եւ ծով հաջողություններ:

Նորույթ

Քաղցկեղի վիճակագրության ու բուժման հարցերի շուրջ

Դրական ու բացասական ելքերի հարաբերությունն այժմ 50-50 է

Այսօր ավելի, քան երբեւէ Երկիր մոլորակի բնակչությունը սիրտանոթային պահանջ է զգում հոգալու առողջության դժվարին խնդիրներ: Եվ խոսքը միայն նորահայտ ու նորագոյացությունների մասին չէ, ինչպիսին ԴԱՎ-ն ու չինական արտասովոր թոքաբորբն են: «Ավանդական», «հին»ախտահարումները նույնպես աճում են ամենուրեք: Արդեն տասնամյակներ շարունակ ախտահում առաջին տեղում են սրտանոթային հիվանդությունները եւ դրանցից մահացությունները: Երկրորդ տեղում չարորակ նորագոյացություններն են:

Ու քանի որ Հայաստանում 100 հազար բնակչի հաշվով վերջին 2 տարում ուռուցքային հիվանդությունների աճն իսկապես նկատելի է (2000 թ. չարորակ նորագոյացությամբ 5000 առաջնային հիվանդ. իսկ 2002-ին՝ 5600), որոշեցինք հանդիպել ՀՀ առողջապահության նախարարության ուռուցքաբանության գիտական կենտրոնի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հայրապետ Գալստյանին: Ի՞նչ է արվում հիվանդության նախնական ախտորոշման ու հետագա բուժման արդի եղանակների կիրառման առումով, եւ արդյոք մեր ազգաբնակչությունն ապահո՞վ է պատշաճ բուժսպասարկման տեսանկյունից:

– Վերջին տարիներին հետաքրքրական դիտարկում է արվել,- ասում է փորձառու բժիշկը:- Զարգացած երկրներում չարորակ նորագոյացությունները սկսել են մեկնաբանվել որպես սոցիալական հիվանդություններ: Բայց սա չի նշանակում, թե պատճառը բխում է վատ ապրելակերպից: Ընդհակառակը, եթե խոսենք բացարձակ թվերով, տնտեսապես զարգացած երկրներում հիվանդացության մակարդակը շատ ավելի բարձր է, քան թերզարգացածներում: Սա եւ կենցաղակերպի (նստակեցություն, անշարժություն), եւ արդյունաբերության, եւ տնտեսության, եւ հորմոնալ սննդակարգի անցնելու արդյունք է: Բնապահպանական չափանիշներ զանազան խախտումները, ուրբանիզացիան իրենց հետ այլ հիվանդությունների շարքում բերում են նաեւ չարորակ նորագոյացությունների աճ: Ու թեեւ մեզանում այդ աճը նույնպես առկա է, այնուամենայնիվ, ցուցանիշները շատ ու շատ ավելի պակաս են, քան եվրոպական երկրներում: Օրինակ, եթե Արեւմտյան Եվրոպայի կամ նույնիսկ մերձբալթյան երկրներում 100 հազար բնակչի հաշվով գրանցվում է 450 դեպք, ապա մեզ մոտ՝ 3 անգամ պակաս՝ 150-160: Միացյալ Նահանգներում եթե ամեն 8-րդ կնոջ կյանքի ընթացքում ախտորոշվում է կրծքագեղձի քաղցկեղով հիվանդություն, մեզ մոտ հարաբերակցությունը 30-ը մեկի է: Բայց, ինչպես ասում են, պետք չէ սփոփվել «հարաբերական երջանկությամբ»:

Հիվանդությունների հաղթահարման համար, պարզվում է, համալիր ծրագիր է մշակվել, որի առաջին եւ հիմնական պատվիրատուն պետությունն է: Բացարձակ թվեր վկայակոչելով՝ հիվանդանոցի տնօրենն ասում է, որ եթե 2001 թ. Քանաքեռի ուռուցքաբանականին տրվել է 167 մլն դրամ, իսկ 2002-ին 196 մլն, ապա 2003-ին՝ ավելի շատ՝ 248 մլն դրամ (իսկ բազային ծավալը՝ 277 մլն), ինչը ցույց է տալիս, որ ուռուցքաբանական ծառայությունն ուշադրության եւ լուրջ մտահոգության առարկա է դարձել երկրում:

Կենտրոնի հանդեպ մեծացել է նաեւ արտասահմանյան կազմակերպությունների հետաքրքրությունը, որոնք ամենատարբեր աջակցություններ են ցուցաբերում՝ հատկացնելով դեղորայք, թանկարժեք սարքավորումներ, տնտեսական ապրանքներ: Այժմ նրանց անմիջական օգնությամբ հիվանդանոցում սկսվել է նաեւ մեծ շինարարություն: Երկու շենքերը կապող միջանցքը թույլ կտա ծանր հիվանդներին տեղափոխել առանց ծյան ու անձրեւի սպառնալիքներին ենթարկվելու:

Այստեղ, ի սեր ճշմարտության, պետք է ասել, որ թեեւ բժշկական նորագույն սարքավորումների հագեցվածությունը նկատելի է, եւ ախտորոշման ու բուժման նորագույն մեթոդներով լուծվում են նախկինում անհաղթահարելի շատ խնդիրներ, դեղորայքի մատակարարման հարցը որոշ իմաստով մնում է բաց: Սակայն տնօրենը վստահեցնում է, որ նախարարությունը պետպատվերի սահմաններում աշխատում է հոգալ հակաքաղցկեղային դեղամիջոցների հայթայթման խնդիրը՝ թեթեւացնելով դժվարին կացության առաջ հայտնված հիվանդների վիճակը:

Միջազգային փորձի ներդրման իմաստով շատ են օգնում պարբերական գործուղումները: Միայն անցյալ տարի 16 գործուղում է եղել արտերկիր՝ ԱՄՆ, Մեքսիկա, Բրազիլիա, Պորտուգալիա, Ավստրիա, Լեհաստան...

Մեր այցելության ժամանակ մանկական բաժանմունքի վարիչ Գրիգոր Բաղալյանը նոր էր վերադարձել ԱՄՆ կատարած գործուղումից եւ պատրաստվում էր լայնածավալ ծրագիր իրագործել Շիրակի մարզում, որովհետեւ ըստ առողջապահության նախարարության տվյալների՝ չարորակ նորագոյացությունների քանակը մարզում գրեթե կրկնապատկվել էր:

– Նորագույն մեթոդների կիրառումն այժմ մեր ամենօրյա, սովորական աշխատանքն է,- ասում է Հ. Գալստյանը:- Եթե 10 տարի առաջ չարորակ նորագոյացությունները վաղ փուլերում հայտնաբերվում էին 6-7 տոկոսի դեպքում, ապա հիմա՝ 20-22 տոկոսի: Եվ որքան վաղ է սկսվում բուժումը, արդյունքն այնքան գոհացուցիչ է: Ցավոք, բնակչության իրազեկության մակարդակը դեռ բավական ցածր է, եւ հիվանդության բարձիթողությունը հասնում է 55 տոկոսի: Սա նշանակում է, որ բժշկի դիմող ամեն 2-րդ հիվանդ բուժումը սկսում է ոչ թե վիրահատությունից, այլ քիմիաթերապիայից, ճառագայթային բուժումից: Շատ կարեւոր է նաեւ, որ կասկածի դեպքում հիվանդին հետազոտի մասնագետը: Այսօրվա բժշկության մեր բնագավառի ձեռքբերումն այն է, որ եթե դեռեւս չգիտենք՝ ինչպես կանխարգելել չարորակ ուռուցքի զարգացումը, ապա գոնե գիտենք դրա վաղ հայտնաբերումը, որը բուժման գրավականն է:

Ախտորոշման նորագույն եղանակներից բժիշկը ներկայացնում է իմունաֆերմենտայինը՝ կապված անտիգենների հայտնաբերման հետ, որ հնարավորություն է տալիս պարզելու գենետիկ կառուցվածքի խաթարումները: Բայց մեթոդի հայտնաբերման սկզբնական ոգեւորությունը մարեց, որովհետեւ կիրառելի է միայն անհատական սուգումների ժամանակ:

– Ուռուցքաբանության ասպարեզում, ընդհանրապես, լինում են մեծ բեկումներ: Օրինակ, եթե 7 անգամ մեծացնում է թոքերի, 4 անգամ միզապարկի եւ այլ օրգանների քաղցկեղով հիվանդացությունը, ուրեմն՝ պիտի կարողանալ հրաժարվել այդ արտավոր սովորությունից: Նույն կերպ՝ եթե նստակյաց կյանքը նպաստում է աղիների դժվար գործունեությանը եւ առաջացնում թունավոր նյութերի կանգ, պետք է հատուկ սննդակարգ մշակել (բուսական յուղի հաճախակի կիրառությամբ) եւ քայլելու ու մարզվելու պարտադիր ժամեր ունենալ:

– Մի խոսքով, հեշտ լուծվող խնդիրներ, որոնց կիրառության մեջ կարելի է չթերանալ: Իսկ եթե, այնուամենայնիվ, հիվանդությունն արդեն առկա է, պետք չէ մատնվել խուճապի: Համակցված ճիշտ բուժման դեպքում դա նույնպես հաղթահարելի է, եւ հիվանդի վարքը մեծապես օգնում է բուժման գործընթացին:

Կամքի նման դրսեւորման ակնհայտ դարձնք շատ հիվանդների հետ շփվելիս ու հիացանք տնօրենի մտածած քաղաքականության իրագործմամբ: Իր հիվանդներին ու բժշկական անձնակազմին խրախուսելու նպատակով նա օրերս հիվանդանոց էր հրավիրել ողնուղեղային հիվանդությամբ սայլակին գամված մարդկանցից բաղկացած «Փարոս» երգչախմբին՝ ցույց տալու, թե որքան մեծ բան է կամքի ուժ դրսեւորել անձնական դժբախտությունները հաղթահարելու ճանապարհին: Աշխարհում միակ այսպիսի երգչախումբ ունեցող ժողովուրդը, հուսանք, իսկապես պիտի կարողանա լուծել իրեն բաժին հասած թե՛ անհատական, թե՛ համընդհանուր դժվարությունները:

Եվ գուցե հեռու չէ օրը, երբ նաեւ այս հիվանդանոցի մատուցած ծառայությունների շնորհիվ կհայտնաբերվի քաղցկեղի կանխարգելման միջոցը՝ մարդկությանն ազատելով ահավոր չարիքից:

Նվիրյալներն, ասում են, միշտ էլ հասնում են՝ մեծ հաջողությունների...

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բնակարանների ջեռուցման համակարգ

Ինչպես լուծել այդ հիմնախնդիրը

Ավարտվեց եւս մեկ ջեռուցման շրջան, որի հիմնախնդիրները մնացին չլուծված: Վերջին մի քանի տարիների փորձը՝ խորհրդային տարիներից մեզ ժառանգություն հասած համակարգի օգտագործումը, կարելի է համարել ձախողված: Հասկանալի է, որ ֆիզիկապես եւ բարոյապես մաշված համակարգը չէր կարող այլի ընկնել արդյունավետությամբ: Պետությունը կուսակեց գազի դիմաց հսկայական պարտքեր եւ ստիպված էր Ռուսաստանին փոխանցել մի շարք ձեռնարկություններ: Սակայն հիմնախնդիրը անհապաղ լուծումներ է պահանջում: Նախ՝ բնակչության էներգամատակարարումը անհնարին է կասեցնել եւ դիտել պետության իրավասության սահմաններից դուրս: Երկրորդ, եթե այս երեւույթը երկար շարունակվի, ապա մենք կկորցնենք բնակարանային ֆոնդի մեծ մասը եւ կստեղծենք սոցիալական մեծ լարվածություն:

Ելքից դուրս գալու համար վերջին ժամանակներս խոսվում է տեղային կաթսայատների կառուցման մասին, այսինքն յուրաքանչյուր շենք պետք է ունենա իր կաթսայատունը: Այս գաղափարը, ինչ խոսք, մի քայլ առաջ է, քան նախկին համակարգի օգտագործումն է, քանի որ կրճատվում են կաթսայատնից մինչեւ շենք տեղի ունեցող ինչպես ջերմային, այնպես էլ հիդրավլիկ կորուստները, սակայն զուրկ չէ բազմաթիվ թերություններից: Նախ՝ ամեն շենքի համար կաթսայատան կառուցումը հսկայական ծախսեր կպահանջի, երկրորդ՝ շենքերի խողովակները եւ մարտկոցները երկար տարիների ընթացքում պատվել են կարբոնատային թաղանթով, որը զգալի կրճատում է ջեռուցման արդյունավետությունը: Երրորդ՝ պահանջվում է բավականաչափ էներգիայի ծախս պոմպով բարձրահարկ շենքերը ջուր մղելու համար: Չորրորդ, կվատանա երեւան քաղաքի առանց այդ էլ լարված էկոլոգիական վիճակը: Այսպիսով, մենք կարծում ենք, որ պետք է քաջություն ունենալ նախկին համակարգից լրիվ հրաժարվելու, որը թույլ կտա նոր լուծումներ փնտրել:

Ելքից դուրս գալու ուղիներից մեկը բնակարաններում գազի տաքացուցիչների տեղակայումն է: Ներկայումս հայտնի են էկոլոգիապես անվտանգ տաքացուցիչներ, որոնք կարող են տեղակայվել գազիֆիկացված բնակարաններում, եւ տեղակայված են գազի հաշվիչներ: Իհարկե, այս դեպքում կմեծանա գազի պայթման կամ թունավորման դեպքերի հավանականությունը, սակայն դրա լուծումն էլ կա: Հայաստանում ներկայումս արտադրվում են գազի տվիչներ, որոնք արձագանքում են գազի ամենափոքր արտահոսքին: Կարծում ենք, նման տվիչների տեղակայումը բնակարաններում կարող է ապահովել բնակարանների անվտանգությունը:

Ելքից դուրս գալու հաջորդ ուղին հետեւյալն է: Գազը, որն այրվում է ներկայիս կաթսայատներում, ապահովում է ընդամենը 10 տոկոս օ.գ.գ., մինչդեռ այրվելով, ասենք, ջերմաէլեկտրակայանում, կապահովի 70 տոկոս օ.գ.գ.: Այդ դեպքում ինչո՞ւ այս կաթսայատների փոխարեն գազը չայրել ջերմաէլեկտրակայաններում եւ ստացվող էլեկտրաէներգիան տրամադրել բնակչությանը: Կարծում ենք, որ այս էլեկտրաէներգիան կարելի է տրամադրել 1 կվտ ժամի դիմաց 10-12 դրամ արժեքով, տեղադրելով բնակչության համար առանձին հաշվիչներ, իսկ ջեռուցման շրջանը ավարտելուց հետո անջատել: Ճիշտ է, այդ դեպքում պետությունը շահույթ կարող է չակնկալել, սակայն եթե հաշվի առնենք բնակարանային ֆոնդին հասցվող վնասները ջեռուցման համակարգի բացակայության դեպքում, ինչպես նաեւ բնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը եւ դրանից բխող քաղաքական անկայունությունը, ապա մոտակա տասը տարիների համար այս առաջարկը կարելի է համարել տնտեսապես արդյունավետ, քանի դեռ ավելի լավ լուծումներ չեն գտնվել:

Խնդիրը լուծելու մեկ այլ ուղի է, ասենք, յուրաքանչյուր շենքում մեկ ջերմային գեներատորի տեղակայումը: Այն սկսում է բնական գազից եւ քիմիական դանդաղ պրոցեսների արդյունքում արտադրում է էլեկտրաէներգիա, որի օ.գ.գ-ն կազմում է 90-95 տոկոս եւ մեկ կվտ ժամ էլեկտրաէներգիայի ինքնարժեքը կարող է կազմել 5 դրամից ոչ ավելի, իսկ ամենակարեւորը՝ էկոլոգիապես մաքուր է եւ անվտանգ: Ստացված էլեկտրաէներգիան կարելի է տրամադրել բնակիչներին առանձին գծով եւ առանձին հաշվիչով:

Մնում է հուսալ, որ այս առաջարկները չեն պատվի անտարբերության մշուշով, քանզի մեր նպատակն է օգնել մարդկանց եւ տալ նրանց տաք եւ հարմարավետ բնակարաններում:

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր

Միջազգային

Թուրք-ամերիկյան հարաբերությունները մտնում են հունի մեջ

Նախորդ համարում «Ազգը» «Թուրքիան փորձում է սփյուռքի հետ երկխոսության պատրանք ստեղծել» խորագրով տեղեկացրեց թուրքական արտաքին գերատեսչության հետախուզության եւ հետազոտությունների բաժանմունքից Քաղրի էջվեթ Թեզջանի մասին, որն ամերիկահայ կազմակերպությունների հետ հանդիպելու առաջադրանքով գործուղվել էր ԱՄՆ: Դրան հետեւեց նույն գերատեսչության խորհրդական Ուղուր Չիյալի գործուղումը:

Եթե Թեզջանը հանդիպել է Ամերիկայի հայկական համագումարի եւ Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարների հետ, ապա Չիյալին հանձնարարվեց հարթել այն տարածայնությունները, որոնք հակահրաչյան պատերազմում ԱՄՆ-ի նկատմամբ Թուրքիայի որդեգրած դիրքորոշման հետեւանքով առաջացել էին երկու վաղեմի դաշնակիցների միջեւ: Ավելին՝ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը, փոխպետքարտուղար Մարկ Գրոսմանը եւ Պենտագոնի նախկին գլխավոր խորհրդական Ռիչարդ Փեռլը Թուրքիան նշանառության թիրախ դարձնելիս կասկածի տակ էին դրել թուրք-ամերիկյան ռազմավարական համագործակցության նպատակահարմարությունը:

Վերոհիշյալ գործիչները զայրացել էին նաեւ հակահրաչյան պատերազմի ավարտին, ի ցույց Վաշինգտոնի, Սիրիայի եւ Իրանի հետ հարաբերություններ զարգացնելու թուրքական իշխանությունների նախաձեռնությունից: Նշանառության թիրախի եւ զայրույթի պարագան ստիպեց վերջիններիս հետքայլ կատարել՝ որոնելով թուրք-ամերիկյան տարաձայնությունների հարթեցման ուղիներ: Թերեւս այդ առումով պատահական չէր Թուրքիայի արտգործնախարարության խորհրդական (որը համապատասխանում է վարչության պետի պաշտոնին) Չիյալի այցը Վաշինգտոն:

Ի դեպ, դեռեւս հունիսի 10-ին նույն գերատեսչության խորհրդական Ուղուր Չիյալի գործուղումը:

Եթե Թեզջանը հանդիպել է Ամերիկայի հայկական համագումարի եւ Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարների հետ, ապա Չիյալին հանձնարարվեց հարթել այն տարաձայնությունները, որոնք հակահրաչյան պատերազմում ԱՄՆ-ի նկատմամբ Թուրքիայի որդեգրած դիրքորոշման հետեւանքով առաջացել էին երկու վաղեմի դաշնակիցների միջեւ: Ավելին՝ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը, փոխպետքարտուղար Մարկ Գրոսմանը եւ Պենտագոնի նախկին գլխավոր խորհրդական Ռիչարդ Փեռլը Թուրքիան նշանառության թիրախ դարձնելիս կասկածի տակ էին դրել թուրք-ամերիկյան ռազմավարական համագործակցության նպատակահարմարությունը:

Վերոհիշյալ գործիչները զայրացել էին նաեւ հակահրաչյան պատերազմի ավարտին, ի ցույց Վաշինգտոնի, Սիրիայի եւ Իրանի հետ հարաբերություններ զարգացնելու թուրքական իշխանությունների նախաձեռնությունից: Նշանառության թիրախի եւ զայրույթի պարագան ստիպեց վերջիններիս հետքայլ կատարել՝ որոնելով թուրք-ամերիկյան տարաձայնությունների հարթեցման ուղիներ: Թերեւս այդ առումով պատահական չէր Թուրքիայի արտգործնախարարության խորհրդական (որը համապատասխանում է վարչության պետի պաշտոնին) Չիյալի այցը Վաշինգտոն:

Ի դեպ, դեռեւս հունիսի 10-ին թուրքական հանրային հեռուստատեսությունը նշել էր, որ Չիյալն այդ օրը մեկնում է Մ. Նահանգներ: Քանի որ նա Վաշինգտոն մեկնեց 6 օր ուշացումով եւ այցի հետաձգման մասին չհայտարարվեց, ուստի պետք է ենթադրել, թե ամերիկացիները մինչ նրան ընդունելն ինչ-ինչ նախապայմաններ են առաջադրել թուրքական իշխանություններին կամ պահանջել են նրանցից Սիրիայի եւ Իրանի նկատմամբ հստակեցնել դիրքորոշումը:

Համենայն դեպս, հունիսի 16-ին Վաշինգտոնում Չիյալը հանդիպել է ԱՄՆ փոխպետքարտուղար Գրոսմանին, իսկ հաջորդ օրը՝ պաշտպանության փոխնախարար Վոլֆովիցին, ինչպես նաեւ պետքարտուղարի տնտեսական հարցերով պատասխանատու օգնական Ալեն Լարոնին: Ըստ երեւույթին Չիյալի բանակցությունները հաջողությամբ են ընթանում, որ ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ֆիլ Ռիքերն ի պատասխան թուրք-ամերիկյան հարաբերությունների առնչությամբ թուրք լրագրողի հարցի ասել է. «Մենք Թուրքիայի հետ ընդհանուր շահեր ունենք: Բարձր ենք գնահատում Թուրքիայի բարեկամությունը: Թուրք-ամերիկյան ռազմավարական համագործակցությունն ամուր հիմքերի վրա է»:

Պետքարտուղարության խոսնակի այս խոսքերը թուրքական իշխանությունների համար հուսադրող են, նրանց հիմք են տալիս ենթադրելու, որ ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները հունի մեջ են մտնում: Ինչ վերաբերում է թուրք-ամերիկյան

Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունները չի բարելավի, քանի դեռ չի կարգավորվել ԼՂ խնդիրը

Սկիզբը՝ էջ 1

«Եթե ձեռնարկվեն սխալ քայլեր, ապա ադրբեջանական ժողովրդի սերը Թուրքիայի հանդեպ կնվազի», թուրքական «Հյուրիեթ» թերթին ասել է Անկարայում Ադրբեջանի դեսպան Մեհմեդ Ալիեւը՝ մեկնաբանելով թուրք դեսպան Թեզջանի հանդիպումներն ԱՄՆ հայկական կազմակերպությունների հետ:

Թեզջանը Նյու Յորքում հայտարարել է, որ Անկարայի իշխանություններից լիազորված է ԱՄՆ հայկական կազմակերպությունների հետ հանդիպումներում ծանոթանալ սփյուռքի տեսակետներին՝ կապված հայ-թուրքական հարաբերությունների ապագայի հետ, ընդգծելով, որ հայ-թուրքական երկխոսության հիմքում չպետք է դրվեն ինչ-ինչ նախապայմաններ:

Պաշտոնական Անկարան Թեզջանի ընտրության հարցում չի սխալվել. վերջինս բազմաթիվ թուրք պաշտոնատարներից մեկն է, որ հետեւողականորեն մերժում է Հայոց ցեղասպանությունը եւ պնդում, որ հայերն են ցեղասպանության ենթարկել թուրքական ժողովուրդներին: Ադրբեջանում դեսպան եղած ժամանակ Թեզջանը բազմիցս ասել է, որ հայերը պետք է Մեղրիի շրջանը զիջեն Ադրբեջանին:

«Ես չեմ կարծում, որ քանի դեռ ԼՂ հակամարտությունը չի լուծվել, Թուրքիան հարաբերություններ կհաստատի Հայաստանի հետ: Հայ-թուրք-ադրբեջանական հարաբերությունների հարցերում պետք է պահպանվեն տարածաշրջանային ամբողջականության, ազգային փոքրամասնությունների իրավունքների, մյուս հարցերը», ասաց խաղաղագետ Նամազովը:

«Միջազգային ասպարեզում Թուրքիայի նկատմամբ Հայաստանի իրականացրած խաղաղական շանտաժը դժվար թե օժանդակի երկու պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը», ասաց լրագրող Բագիրովը, հիշեցնելով, որ Հայաստանը փորձում է «այսպես կոչված 1915 թ. Հայոց ցեղասպանության» հարցը պահել օրակարգում, Ադրբեջանի նկատմամբ ունի տարածքային պահանջներ, որն արտահայտվեց «բացահայտ ագրեսիայի» ծեւով:

Քաղաքագետ Նամազովի կարծիքով, թուրքական կողմի նախաձեռնությունը ԱՄՆ-ի նախաձեռնությունն է, ինչպես «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծման դեպքում էր:

«Այդ հանձնաժողովի գործունեությունը միանշանակ չընդունվեց Հայաստանում, Թուրքիայում, Ադրբեջանում: Փաստորեն, հանձնաժողովը ոչնչի չհասավ: Նույնն է լինելու նաեւ դեսպան Թեզջանի պարագայում», ասաց Նամազովը:

«Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական եւ հայկական լոբբիական կազմակերպությունների բանակցությունները, որոնք, ինչպես հաղորդվում է, Անկարայի եւ Երեւանի երկխոսության հաստատման նպատակ են հետապնդում, ավելի շատ նպատակ են հետապնդում պարզելու՝ ինչքանո՞վ այդ (լոբբիական) կազմակերպությունների դիրքորոշումը «Հայոց ցեղասպանության» եւ Ղարաբաղի հարցերում էվոլյուցիայի կենթարկվի», ասաց լրագրող Բագիրովը:

ԿԺԴՀ-ն «կամրաղնդի» իր միջուկային ուժերը

Փենյանն ունի «պաշտպանական միջուկային ուժեր» եւ դրանք «էլ ավելի կամրաղնդի», որպեսզի հակազդի ԱՄՆ-ի թշնամական խաղաքաղաքականությանը: Այդ մասին ասվում է ԿԺԴՀ ԱԳՆ ներկայացուցչի հայտարարության մեջ, որը երեկ տարածել է երկրի լրատվական գործակալությունը:

Հայտարարության մեջ նաեւ նշվում է, որ ԿԺԴՀ-ն այլեւս հույս չունի, թե բազմակողմ բանակցությունների միջոցով հնարավոր է լուծել հյուսիսկորեական միջուկային զենքի խնդիրը: Վերջինս կապված է միջուկային զենքը չտարածելու պայմանագրից ԿԺԴՀ-ի դուրս գալու հետ:

Հյուսիսային Կորեան փաստորեն դեմ է, որ իր միջուկային ծրագիրը քննարկվի ԱՄՆ-ի, ՉԺՀ-ի, Հարավային Կորեայի եւ Ճապոնիայի մասնակցությամբ, մինչդեռ Վաշինգտոնը պահանջում էր անցկացնել հենց այդպիսի բազմակողմ քննարկումներ:

Ապրիլին Պեկինում ԿԺԴՀ-ի, ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի մասնակցությամբ անցկացվել էր բանակցությունների առաջին փուլը, որն ավարտվել էր անարդյունք: Երկրորդ փուլի անցկացման ժամկետները որոշված չեն:

ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը երեկ Պնոմպենում հայտարարեց. «Ոչ մի խնդիր ԱՄՆ-ին այնքան չի մտահոգում, որքան Հյուսիսային Կորեայի միջուկային ծրագիրը»:

Պ. Ք.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Բուշն արդեն նախընտրական գումարներ է հանգանակում

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը պաշտոնապես սկսել է իր նախընտրական ֆոնդերում միջոցներ հանգանակելու արշավը: Հանրապետական կուսակցությունն ակնկալում է զանազան միջոցառումների ընթացքում հավաքել 170-200 մլն դոլարանոց ռեկորդային գումար:

Վաշինգտոնի «Հիլթոն» հյուրանոցում երեքշաբթի կազմակերպված երեկույթը Սպիտակ տան ներկայիս ղեկավարին բերել է 4 մլն դոլար: Հյուրերի մուտքի տոմսն արժեր 2000 դոլար: Ամբողջ հասույթը ծառայեցվելու է Բուշի նախընտրական արշավին, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Սպիտակ տան մամլո քարտուղար Արի Ֆլեյշերը հայտարարել է, որ Բուշը մտադիր է վերընտրվել նախագահի պաշտոնում: Ընթացիկ եւ առաջիկա շաբաթներին Բուշը համանման հանգանակություններ է անցկացնելու Ատլանտայում, Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Մայամիում եւ Տամպայում: Հուլիսին հանգանակության միջոցառումներ կձեռնարկվեն Բուշի հայրենի Տեխասի նահանգի 3 խոշորագույն քաղաքներում:

Նախընտրական շտաբի տվյալներով, 2000 թ. ընտրություններից առաջ Ջորջ Բուշի հանգանակած 100 մլն դոլար գումարը մինչ օրս մնում է ռեկորդային: 2004 թ. նոյեմբերին կանցկացվեն նախագահական հաջորդ ընտրությունները: Արդեն եկող տարվա հունվարին Այովայի եւ Նյու Հեմփշիրի նահանգներում տեղի կունենան առաջին միջակա ընտրությունները:

Հանրապետականների խորհրդատու Մոթ Ռիդի խոսքերով, կառավարող կուսակցությունը դրամական միջոցների հանգանակության նախընտրական արշավի ընթացքում մտադիր է «հասնել դեմոկրատների նկատմամբ ճնշող գերազանցության, բարոյալքել նրանց, ստեղծել այն տպավորությունը, որ Բուշին անհնար է հաղթել»:

Դեմոկրատները խոստովանում են, որ հակահրաչյան պատերազմն ամերիկացիներին համախմբել է նախագահի շուրջը եւ նպաստել երկրում նրա ժողովրդականության աճին: Միաժամանակ Բուշի հակառակորդները գտնում են, որ հանրապետականների գանձարանում 200 մլն դոլարի կուտակումը բավարար չի լինի նրա վերընտրության համար: Դրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ Բուշի նախագահության տարիներին աշխատանքը կորցրել են 2,5 մլն ամերիկացիներ:

2002 թ. զենքի վրա ծախսվել է 794 մլրդ դոլար

Ստոկհոլմում գործող խաղաղության միջազգային հետազոտական ինստիտուտի վերջին տարեգիրքը վկայում է, որ 2002 թ. աշխարհում նախորդ տարվա համեմատությամբ ռազմական ոլորտի ծախսերն ավելացել են միջին հաշվով 6 տոկոսով, հասնելով 794 մլրդ դոլարի:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ զենքի արտահանության գծով առաջին տեղում Ռուսաստանն է: 2002 թ. սպառազինությունների խոշորագույն ներմուծողը եղել է Չինաստանը, որին հաջորդել է Հնդկաստանը:

Միայն ԱՄՆ-ի ռազմական բյուջեից զենքի վրա ծախսվել է 336 մլրդ դոլար, որ կազմում է համաշխարհային ծախսերի 43 տոկոսը, 2001 թ. համեմատությամբ աճը կազմել է 7 տոկոս: Մինչդեռ ՆԱՏՕ-ի անդամ արեւմտաեվրոպական երկրների սպառազինության ծախսերը 2000 թ. համեմատությամբ նվազել են 3 տոկոսով:

Փորձագետներն ԱՄՆ ռազմարդյունաբերության զարգացման եւ ռազմական ծախսերի կտրուկ աճի գլխավոր պատճառը համարում են հակաահաբեկչական պատերազմի ծավալումը: Տարեգրքում նշվում է, որ աշխարհի մյուս երկրները պատրաստ չեն կամ անկարող են հետեւել ԱՄՆ-ի օրինակին:

Սպասվում է, որ 2002-2007 թթ. ԱՄՆ պաշտպանական բյուջեն կաճի 32 տոկոսով, 2003 թ.՝ 6 տոկոսով:

Մասնագետների կանխատեսումների համաձայն, Ռուսաստանի ռազմական բյուջեն 2003 թ. կաճի 7-8 տոկոսով: Ռուսական զենքի արտահանումների ծավալը կանոնավոր աճ է արձանագրում 1999 թվականից: 2002 թ. արտահանված ռուսական զինատեսակների արժեքը կազմել է 4,8 մլրդ դոլար: Ըստ Ռոյթերի, զենքի համաշխարհային շուկայում Ռուսաստանի բաժինը կազմում է 36 տոկոս:

Պաղեստինցիները կշարունակեն ահաբեկչությունները

Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասին չի հաջողվել պաղեստինցիների զինյալ խմբակցությունների առաջնորդներին համոզել դադարեցնել հակահրայելական ահաբեկչությունները: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ պաղեստինյան 13 կազմակերպությունների ղեկավարների անզիջում դիրքորոշումը հարցականի տակ է դնում հունիսի 4-ին Աքաբայում պաղեստինցի եւ իսրայելցի ղեկավարների ընդունած հաշտության «ուղեցույցի» կենսագործումը:

Մահմուդ Աբբասի հետ հանդիպման ավարտից հետո Իսլամական դիմադրության շարժման առաջնորդներից մեկը Ֆրանսպրեսին հայտարարել է, որ հրադադարի հարցը մնում է առկախ: Իսլամական ջիհադի առաջնորդ Մոհամմեդ ալ Հինդին ավելացրել է, որ «դիմադրությունը պաղեստինցիների օրինական իրավունքն է»:

Մերձավորարեւելյան հաշտության գործընթացի հովանավորդարձած ԱՄՆ վարչակազմը երեկ հայտարարել է, որ իսրայելցի ու պաղեստինցի ղեկավարների հետ հերթական անգամ բանակցելու նպատակով ուրբաթ օրը տարածաշրջան կժամանի ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը:

Իսրայելի արտգործնախարար Սիլվան Շալոմը իր հերթին նշել է, որ Ջորջ Բուշի խորհրդական Կոնդոլիզա Ռայսը Մերձավոր Արեւելք կայցելի հունիսի 29-ին:

Նախագահ Բուշը Փաուելին եւ Ռայսին կարգադրել է վերահսկել հիշյալ «ուղեցույցի» պահանջների կատարումը, որով մասնավորապես նախատեսվում է մինչեւ 2005 թ. ստեղծել Պաղեստինի պետություն:

Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը հայտարարել է, որ Պաղեստինյան ինքնավարության հետ հաշտության համաձայնագրի կնքումն անհնար կլինի, քանի դեռ շարունակում են գործել պաղեստինյան ծայրահեղական խմբավորումները:

Արամ Խաչատրյան-100

Ռոստոկում ավարտվեցին հայ մշակույթի օրերը

«Հայաստան. փոքր երկիր՝ մեծ ժառանգությամբ» այսպես էին անվանել Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված Գերմանիայի հյուսիսային Ռոստոկ քաղաքում մայիսի 30-ից հունիսի 6-ն անցկացված հայկական օրերը: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կազմակերպած միջոցառման բացման հանդիսությանը ողջույնի խոսք են հղել հիշյալ հիմնադրամի ներկայացուցիչ Վոլֆգանգ Ահներ-Թյոննիսը, ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Կարինե Ղազինյանը: Միջոցառումը վարել են Հերմինե Հովակիմյանն ու Հայնց Քյոհլերը: Հայկական օրերի շրջանակներում բացվել է Անդրեաս Վոլֆենսբերգերի «Հայաստան. քար առ քար» լուսանկարչական ցուցահանդեսը: Ընդմիջումից հետո «Հայաստանի 12-ամյա անկախությունը. ներքին եւ արտաքին քաղաքական զարգացումներ» թեմայով բանախոսել է բեռլինաբնակ պատմաբան, լրագրող Ասոս Մանուչարյանը: Բեռլինաբնակ մեր մեկ ուրիշ հայրենակցի՝ արվեստաբան Մարգարիտա Թադեւոսյանի կարդացած «Արարատի երկիրը հայ արվեստագետների ստեղծագործություններում» զեկուցմամբ ավարտվել է ճանաչողական այս միջոցառման անդրանիկ օրը:



Ռոստոկի երաժշտության եւ թատրոնի բարձրագույն դպրոցում հաջորդ օրը կայացած համերգով շարունակվել է Խաչատրյանի 100-ամյակին ծոնված հանդիսությունը: Հիշյալ հասատության ռեկտոր Հարթմուտ Մյոլլերի, Ադենաուեր հիմնադրամի ներկայացուցչի, ՀՀ դեսպանի ողջույնի խոսքից եւ, Հերմինե Հովակիմյանի կողմից Համո Սահյանի «Հայաստան ասելիս» բանաստեղծությունն ընթերցելուց հետո բեմը տրամադրվել է նախկինում հայաստանաբնակ, այսօր Գերմանիայի տարբեր քաղաքներում ուսանող, ինչպես նաեւ արդեն ճանաչում ունեցող երաժիշտների՝ Աննա Մանասյանցին (մեցցոսոպրանո), Գոռ Արսենյանին (տենոր), Գրիգոր Շագոյանին (բաս-բարիտոն), Լուսինե Խաչատրյանին (դաշնամուր), Սերգեյ Խաչատրյանին (ջութակ), Իրինա Խաչատրյանին (դաշնամուր), Վլադիմիր Խաչատրյանին (դաշնամուր), Կորյուն Ասատրյանին (սաքսոֆոն): Կոմիտասի, Խաչատրյանի, Բաբաջանյանի, Հարությունյանի, Չուխաջյանի ստեղծագործությունների կողքին հնչել են արեւմտաեվրոպական դասականների հայտնի արիաներ ու գործիքային ստեղծագործություններ: Նույն ծրագրի շրջանակներում հունիսի 1-3-ը ցուցադրվել է կանադահայ բեմադրիչ Ասոմ Եգոյանի «Արարատ» ֆիլմը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Նարեկ Արղամանյանին՝ Զայլերի 4-րդ մրցանակ

Մայիսի 13-25-ը բավարակաան Քիթցինգենում կայացած Զայլեր դաշնամուրային միջազգային 3-րդ պատանեկան մրցույթի 4-րդ մրցանակին (750 եվրո դրամական պարգեւ, համերգ Քիթցինգենում) Չինաստանը ներկայացնող Բո Հուի հետ արժանացել է 1989-ին Վանաձորում ծնված Նարեկ Արղամանյանը: Սովորում է Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, մի շարք միջազգային մրցույթների դափնեկիր է:

Առաջին մրցանակի արժանացել է Ուկրաինան ներկայացնող Դինարա Նաղջաֆովան (7000 եվրո արժողությամբ «Զայլեր» դաշնամուր), երկրորդ մրցանակը տրվել է Չինաստանը ներկայացնող Կուոկ Վայ Լիոյին, ինչպես նաեւ նովգորոդցի Դանիիլ Կիրիլլովին: 3-րդ մրցանակը տրվել է չին Ցիանգ Ցուոյին:

Ավելի քան 150 տարվա պատմություն ունի գերմանական «Զայլեր» մակնիշի դաշնամուրի արտադրությունը, համաշխարհային ճանաչում, փառք: Ի նշանավորում հոբելյանական այդ տարելիցի, միջազգային մրցույթի կազմակերպման սկիզբ է դրվել: 2003-ին 10 որ տեւած միջոցառումը թվով 3-րդն էր: Մրցույթը տարիային երկու խումբ է առանձնացնում՝ մինչեւ 16 տարեկաններ, 17-22 տարեկաններ:

Զայլեր մրցույթի ժյուրիի նախագահն է Բերնդ Գյոթցկեն (Գերմանիա), փոխնախագահն է Մարչելլա Կրուդելին (Իտալիա), անդամներն են՝ Յուկո Յամական (Ճապոնիա), Վլադիմիր Կրայնեւը (Ռուսաստան), Սինգ Քիանգ Լին (Հոնկոնգ), Պյոտր Պալեչնին (Լեհաստան), Պոլ Պոլլեյը (ԱՄՆ):

17-22 տարեկանների մրցույթում առաջին տեղ շահած դափնեկրին տրվում է 25000 եվրո արժողությամբ «Զայլեր» մակնիշի ռոյալ, 2-րդ մրցանակը 7000 եվրո արժողությամբ «Զայլեր» դաշնամուր է. երկու դեպքում էլ՝ եվրոպական բեմերում համերգներ տալու հնարավորություն է ընձեռվում: Հուսանք, որ հաջորդ անգամ Նարեն հանդիսատեսին բուռն հիացմունք պատճառելուց բացի, հաղթահարելով ժյուրիի «պատնեշը», տուն կտանի ամենամեծ մրցանակը:

Ուրախությամբ ծանուցենք, որ մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 53 երկրի 280 պատանի դաշնակահարների մեջ Նարեից բացի եւս 3 հայի անվան հանդիպեցինք:

ԱՆ. Հ

Ալամազյան քույրերի քանգարանը վերականգնվում է

ԵՐԵՎԱՆ, 18 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Լինսի» հիմնադրամի կողմից իրականացվող «Մշակույթ» ծրագրի շրջանակներում Գյումրիում առաջիկայում կավարտվի նկարիչներ Մարիամ եւ Երանուհի Ալամազյան քույրերի տուն-թանգարանի վերականգնումը, որն ավերվել էր 1988-ի երկրաշարժից:

Ըստ ճարտարապետ Ռ. Եղոյանի, շենքը, որը մինչեւ երկրաշարժը Գյումրիում գործող մշակութային օջախների շարքում իր ուրույն տեղն ուներ, ամբողջությամբ վերափոխվել է՝ միայն արտաքինից պահպանելով իր նախկին տեսքը:

Նշենք, որ Մարիամ եւ Երանուհի Ալամազյանները ստեղծագործել են 1920-1970-ական թվականներին՝ իրենց անհատականությունը դրսեւորելով հաստատես դեկորատիվ նկարչության բնագավառում: Քույրերը նաեւ զբաղվել են խեցեգործությամբ, որի մի քանի նմուշներ ներկայացնելով Հնդկաստանին նվիրված ստեղծագործությունների ցուցահանդեսում, արժանացել են Ջ. Նեհրուի անվան մրցանակի:

Նորաշեւություն թատրոնում

Օրերս «Կանաչ» մշակութային կենտրոնում անցկացվեց «կոլաժ» շոու-ծրագիր՝ «Նյու Ինիջ» նորաձեւության թատրոնի կազմակերպմամբ ու մասնակցությամբ: Միջոցառման ժամանակ իրենց առաջնեկների աշխատանքներն էին ներկայացրել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դիզայնի ֆակուլտետի ուսանողուհիներ Աշխեն Վարդանյանը եւ Անի Ասատրյանը: Շոուծրագրի գլխավոր կազմակերպիչն ու բեմադրիչն էր «Նյու Ինիջ» նորաձեւության թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարինե Չիլինգարյանը: Ներկայացման հենց վերջին կոլաժները կրում էին «Օդ», «Ջուր», «Կրակ», «Արեւ» խորհրդանշական խորագրերը: Կոլաժների համար հումք էին ծառայել «հին սնդուկի» կտորեղենները ու պարագաները, ուստի աշխատանքներն էլ կրում էին դեկորատիվ բնույթ: Նրանց հաջողվել էր հինը ներկայացնել նորովի, չէ՞ որ նորաձեւության մեջ նորը շատ լավ մոռացված հինն է:

ՆԱՐԻՐՈՒՀԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԵՄՀ ուսանողուհի

«Մանջուշակա» թատրոնը Հայաստանում

1995 թ. Կալկաթայում Մայր Թերեզայի հետ հանդիպելուց հետո «Մանջուշակա» անվամբ սկսում է իր գործունեությունը ճապոնական ազգային պարային թատրոնը: Եվ Մայր Թերեզայի խորհրդով թատրոնը բարեգործական գործունեությունը սկսում է Հնդկաստանում: 1999 թ.-ից թատրոնը հյուրախաղերով հանդես է գալիս չեռնոբիլյան աղետից տուժած Բելառուսի մի շարք շրջաններում, 2000 թ.՝ Նեպալում, 2001 թ.՝ Մոնղոլիայում, Չինաստանում եւ Թաիլանդում, 2003 թ.՝ Ֆիլիպինում եւ միաժամանակ նաեւ հյուրախաղեր ճապոնիայում:

«Մանջուշակա» ճապոնական ազգային պարային թատրոնը ներկայացնում է ավանդական ազգային պարերը՝ ներառելով արդեն մեզ ծանոթ սամուրայ, ճապոնական սրեր, կագուրա եւ այլ տարրեր: Թատրոնի հիմնական նպատակն է պարերի միջոցով օգնել մարդկանց, աջակցել դժբախտության մեջ գտնվողներին եւ պարգեւել նրանց հոգեկան կայունություն: Համաձայն հին ճապոնական առասպելի՝ դրախտում աճում էին հրաշալի սպիտակ ծաղիկներ, տեսնելով նրանց գեղեցկությունը՝ մարդ կորցնում է չարության ցանկությունը: Այդ դրախտային ծաղիկները կոչվում էին մանջուշակա, որի անունն էլ վերցնելով՝ թատրոնն իր ներկայացումներով ուրախություն է պարգեւում աշխարհի տարբեր համերգասրահներում: Նման ջերմ ու անջնջելի տպավորություններ ստացավ նաեւ հայ հանդիսատեսը, որ ներկա էր երեւանյան հյուրախաղերի եկած «Մանջուշակա» ճապոնական ազգային պարային թատրոնի ներկայացումներին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիրք գոյատեւման գերխնդրի մտահոգությամբ

Լեւոն Վարդանի «Վարուժնագիրը»



ՎԱՐՈՒԺՆԱԳԻՐ

«Ասե՛ք, բարեկամնե՛ր, ես ինչպես կարողանամ խաղաղության մասին բարոյակրթական դասեր տալ, երբ աշխարհում իմ սեփական ու հարազատ տունը չունեմ, ուր կարողանամ տնկել իմ նշենու ծառը եւ սպասեմ նրա ծաղկավորվելուն, երբ իմ էն հայրենիքը, իմ պապերի հողերի կարոտը հոգումս առած թափառում եմ հար երկրից երկիր...»: Հակոբ Կարապետնցի այս դառը խոստովանությունն ամենադիպուկ բնորոշումն է սփյուռքում ոչ իրենց կամքով հայտնված եւ ազգային դեմքի, լեզվի ու գոյության մշտամնա խնդիրներով ծանրաբեռ երեկվա, այսօրվա ու վաղվա սերունդների վիճակի: Գոյատեւման գերխնդիրն էլ սփյուռքի կրթամշակութային կյանքին եւ գրականության թեմաներին տալիս է նպատակին ուղղված նշանակություն:

Լեւոն Վարդան հայրենադարձ պատմաբանի ու գրողի «Վարուժնագիր» հնչյակների (սոնետների) ժողովածուն լույս է տեսել 2001 թ.-ին, Բեյրութում, հեղինակու, գրողի զարմուհու՝ Ծովիկ Կեսիկյանի կողմից: Իմ առջեւ անծանոթ հեղինակ է՝ իր մի գրքով: Բայց դա ընչահեղձ անելու չափ շատ է՝ հեղինակին խորությամբ զգալու ու գնահատելու համար: Իր ու բոլոր հայ, իսկ ավելի մասնավոր՝ սփյուռքահայ սերնդի իր վարուժնակներին՝ արուներին, ցեղը շարունակողներին են ծոնված գրքի 63 սմանչելի սոնետները: Գիրքը գրվել է որպես յուրաքանչյուր անհատ ծնողի ու որպես հայ ազգի յուրաքանչյուր ավագ սերնդի պարտականություն ու պատգամ իրենց զավակներին:

Գիրքը հոգու, մտքի, ասելիքի պոռթկում է: Այն հայ մարդու յուրահատուկ բնույթի մի ընդհանրացված դրսեւորում է, որ որդեպատություն կկոչվի: Բայց հայը սրանից վեր ունի նաեւ օտար հողի վրա շարունակվելու, ոսկեղենիկ, չքնաղ արեւմտահայերենով մշտապես գրելու, ուսուցանելու, մտածելու ու պատգամելու, իր զավակով գոյատեւելու խնդիր: Հնչյակների առաջին շարքերը հիացք են, հոր արժեւորում իր զավակին, հոր հպարտություն, որ ծնվել է, կա՛ իր վարուժնակը, իր արու զավակը, իր հույսը: «Չկայի՛ր դուն դեռ երէկ, այսօր ներկայ ես ահա, գիտակցութեան պէս շեթ, կարօտներու պէս ուժգին, որոնք հիմա ինծմէ ներս աղօթքի մը պէս, կ'աճին, կընեն տարբեր զիս ինծմէ, կընեն իշխան ու արքայ»: «Աղուո՛ր տղաս» գորովով, հույսով ու վստահությամբ է իր մեծ սերն արտահայտում, հուզվում օտար հողի վրա ապրող հայ մարդն իր վարուժնակի մանուկ օրերի թոթովանքով: Մանկությունից մինչեւ հասունություն տարբեր պատգամներ պիտի կատարի զավակը: Ու այդ պատգամները կատարելուց առաջ նախ պետք է նրան հայաբուխ ոգի ու կրթություն տալ, նրան ճանաչել ու սիրել տալ մեր ազգային սրբությունները, որոնցով նա իր կյանքը «ընէ երգ ու լոյսի պատարագ»: Արժեքավորում է գրողն իր զավակի համար մայրենի լեզուն, որն իր ժամանակին «... ընդարձակ զիս աշխարհին տիրած արքայ բախտաւոր»: 24-րդ սոնետը, թերեւս կարելի է այս գրքի գլուխգործոցը համարել, դարձնել դասագրքային, դնել դասականների կողքին ու անգիր անել տալ ամեն հայ մանկան: «Հա՛յ ես, տղա՛ս, հայո՛ւ պէս պիտի նայիս այս կեանքին: Չափէս, կշռէս ամէն բան եւ զգենուս օրերուն խորհուրդը մեծ ու դառնաս մեր հայրերուն լոյս հոգին»: Եվ բանաստեղծի գրչի տակ, տողից տող ուլունվում են հայ սրբությունները, որոնց եթե տեր չկանգնի իր արու զավակը, եթե վաղվա հանդեպ ահ չունենա, կմնա «... անկայք, անհող, անհաստատ...»: Խրատում, հորդորում, դողդողում է նա զավակի համար, նորից սիրուց պոռթկում՝ սիրտը ճաք տալու աստիճան: «... հակառակ ալ օրերուն տխրակոծ, սպասեցի, որ գայիր որպէս ճակատի շեթ գիր...»: Զգայացունց, հուզիչ են բոլոր հնչյակները, սակայն կան առանձինները ու նաեւ քառյակներ ու տողեր, որ անզորացվում են մտքի ու կերպի ներդաշնակությամբ: Բանաստեղծը հոգեբռնկման մեջ է պահում ընթերցողին, գրքի նպատակի, ասելիքի հոգեմոս լինելուն գումարվում է բանաստեղծի գործածած դիպուկ, գունագեղ բառագանձը, ու ծնվում է բարձր գեղարվեստը՝ «Վարուժնագիր»:

Ու եթե դու էլ նույն մտահոգությունն ու ցավը կրում ես քո մեջ (անկախ այն բանից հայրենիքում ես ապրում, թե սփյուռքում), ուրեմն հնչյակների այս չքնաղ ժողովածուն քեզ համար եւ քո զավակի համար է գրված: Այսպես ու այս ուղիով՝ զավակով, հայաբուխ վարուժնակներով միայն կլուծվի այսօր դեռ գոյատեւման, վաղն արդեն պատմական, պահանջատիրական խնդիրներ դառնալու իրոք, որ կանգնած է հայ մարդու առաջ թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում:

Լեւոն Վարդանի «Վարուժնագիր» գիրքը խոսք-զենք է, ու նրանով խրատվողը պիտի մասնակցի այն պայքարին, որ մղել են Հ. Կարապետնցը, օտար հողում իրենց կյանքն ավարտած բոլոր հայ տաղանդները՝ հայրենի հողում իրենց նշենու ծառը տնկելու ու ծաղկմանը սպասելու համար:

ՉՈՒՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԹԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՇՔԵՐՈՎ

Դեյիդ Բեքհեմն արքայական ակումբում

Դեյիդ Բեքհեմի ոդիսականն ավարտվեց: «Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպանը չորսամյա պայմանագիր է կնքել Մադրիդի «Ռեալի» հետ: Վերջինիս նախագահ Ֆլորենտինո Պերեսը անգլիական ակումբին 35 մլն եվրո է վճարել, ինչն այնքան էլ բարձր գին չէ Բեքհեմի նման ֆուտբոլային «աստղի» համար: Ժամանակին Զիդանի, Ֆիգուի եւ Ռոնալդոյի տեղափոխման համար «Ռեալն» ավելի խոշոր գումարներ էր ծախսել: Բեքհեմը չորս տարվա համար «Ռեալում» 25 մլն եվրո աշխատավարձ կստանա: Հայտնի չէ, թե որքան կարող է վաստակել Դեյիդը գովազդային պայմանագրերի շնորհիվ: Հուլիսի 1-ին անգլիացի ֆուտբոլիստը բժշկական հետազոտության կենթարկվի, իսկ հաջորդ օրը նրան կներկայացնեն թիմի երկրպագուներին: «Ռեալի» նորեկը արքայական ակումբում հանդես կգա 11 համարի մարզաշապիկով: Ինչպես հայտնի է, այս տարի այդ համարի մարզաշապիկը կրում էր բրազիլացի Ռոնալդոն, սակայն նա համաձայնել է հագնել իրեն հոգեհարազատ 9 համարի մարզաշապիկը: Չնայած «Մանչեսթր Յունայթեդում» եւ Անգլիայի հավաքականում Բեքհեմը հանդես էր գալիս 7 համարի մարզաշապիկով, սակայն «Ռեալում» ստիպված է հրաժարվել դրանից, քանի որ այն պատկանում է Ռաուլին: Վերջինս վաղուց է նշել, որ ոչ մի դեպքում այդ համարն ուրիշի չի զիջի: Ի դեպ, 2 տարի առաջ Լուիս Ֆիգուին եւս չհաջողվեց ձեռք բերել 7 համարի մարզաշապիկը:

Գործարքի առնչությամբ Բեքհեմը նշել է, որ եթե չհամաձայնվեր տեղափոխվել «Ռեալ», ապա ամբողջ կյանքում զղջալու էր: Նա նաեւ ավելացրեց, որ հպարտ է «Մանչեսթր Յունայթեդում» հանդես գալու համար եւ շնորհակալ է անգլիացի ֆուտբոլասերներից, որոնց կուռքն է հանդիսանում:

Իհարկե դժվար է ասել, թե ինչպես կընթանան Բեքհեմի գործերն «աստղերով» հագեցած թիմի կազմում: Սակայն ֆինանսական առումով «Ռեալն» իհարկե, շահեց, քանի որ 35 մլն եվրոն պետք է վճարի 5 տարվա ընթացքում: Մյուս կողմից, հաշվի առնելով Բեքհեմի եւ թիմի գլխավոր մարզիչ Ալեխս Ֆերգյուսոնի լարված հարաբերությունները, «Մանչեսթր Յունայթեդին» ձեռնտու չէր շաբաթական 170 հազար դոլար աշխատավարձ ստացող ֆուտբոլիստին ակումբում պահելը: Ակումբի ինտերնետային սայթում Ալեխս Ֆերգյուսոնն իր շնորհակալությունն է հայտնել Բեքհեմին թիմում ունեցած ներդրման համար եւ նրան ու նրա ընտանիքին հաջողություններ է մաղթել:

«Ռեալի» գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեն նշել է, որ Բեքհեմը խորհրդանիշ է, հռչակավոր ֆուտբոլիստ է: Առայժմ դժվար է ասել, թե նա ո՞ր դիրքում կխաղա: Դել Բոսկեի համոզմամբ, պետք է Բեքհեմին հնարավորություն ընձեռել դրսեւորելու իրեն «Ռեալում»: Մարզիչը նշել է, որ Ֆիգուի հետ մրցակցություն չի լինի, քանի որ նրանք միասին են հանդես գալու:

Վերջում ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում աշխարհի ամենաթանկ 10 ֆուտբոլիստների ցանկը: Առաջին հորիզոնականը զբաղեցնում է Զինեդին Զիդանը: 2001 թ. «Յուվենտուսից» «Ռեալ» տեղափոխվելու համար իսպանական ակումբը վճարել է 64.4 մլն դոլար:

1. Զինեդին Զիդան («Յուվենտուսից» «Ռեալ», 2001 թ.)	64,4
2. Լուիս Ֆիգու («Բարսելոնից» «Ռեալ», 2000 թ.)	56,1
3. Էոնան Կրեսպո («Պարմայից» «Լացիո», 2000 թ.)	54,1
4. Քրիսթիան Վիերի («Լացիոյից» «Ինտեր», 1999 թ.)	50,0
5. Ռիո Ֆեռդինանդ («Լիդսից» «Մանչեսթր յուն.», 2002 թ.)	47,0
6. Ջանլուիջի Բուֆոն («Պարմայից» «Յուվենտուս», 2001 թ.)	45,9
7. Ռոնալդո («Ինտերից» «Ռեալ», 2002 թ.)	44,2
8. Դեյիդ Բեքհեմ («Մանչեսթր Յուն»-ից «Ռեալ», 2003 թ.)	41,3
9. Գաիսկա Մենդյետա («Վալենսիայից» «Լացիո», 2001 թ.)	41,0
10. Սեբաստիան Վերոն («Լացիոյից» «Մանչեսթր Յուն.», 2001 թ.)	39,5

ԲՈՆՅՔԱՍԱՐՏ

Տուան ցանկանում է մենամարտել Ջոնսի հետ

Դավիթ Տուան պատրաստվում է մենամարտել բոնցքամարտի համաշխարհային ընկերակցության վարկածով աշխարհի չեմպիոն Ռոյ Ջոնսի հետ: Քանի որ Վիտալի Կլիչկոն հունիսի 21-ին Լենոքս Լյուիսի հետ վիճարկելու է բոնցքամարտի համաշխարհային խորհրդի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, ուստի բոնցքամարտի համաշխարհային ընկերակցության վարկածով ուժեղագույնին որոշելու իրավունքը մեխանիկորեն սանում է Տուան: Ներկայում Տուան բոնցքամարտի համաշխարհային ընկերակցության վարկանիշային ցուցակում 2-րդն է: Ռոյ Ջոնսն իր տիտղոսը պետք է պաշտպանի այս տարվա հուլիսի 27-ին: Ջոնսն աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճել էր այս տարվա մարտի 1-ին՝ հաղթելով Ջոն Ռուիսին: Տուայի մենեջերը հայտարարել է, որ Ջոնսի մենամարտից հետո բոնցքամարտի համաշխարհային ընկերակցության ղեկավարությունը պետք է ստիպի Ռոյին բանակցել իրենց հետ ապագա մենամարտի կազմակերպման շուրջ:

Դե Բուր եղբայրներին հրավիրում են Քաթար

Հոլանդիայի հավաքականի ֆուտբոլիստներ Ռոնալդ եւ Ֆրանկ դե Բուր երկվորյակ եղբայրները կարող են հայտնվել միեւնույն թիմում, եթե ընդունեն Քաթարի ակումբներից մեկի հրավերը: Այդ երկրի ֆուտբոլային լիգայի տեխնիկական տնօրեն Մանֆրեդ Հոները հայտնել է, որ երկվորյակ եղբայրներին բավական շահավետ առաջարկ է արվել:

«Բարսելոնի» պաշտպան Ֆրանկ դե Բուրը վաղուց էր ցանկանում մրցաշրջանի ավարտից հետո հեռանալ թիմից, իսկ նրա եղբայրը՝ «Գլազգո ռեյնջերսի» կիսապաշտպանը, երազում էր եղբոր հետ հանդես գալ միեւնույն ակումբում: Եվ ահա, Քաթարը պատրաստ է նրանց միավորելու մեկ թիմում: Ընդհանրապես վերջին շրջանում Քաթարի ակումբները տրանսֆերային ակտիվ գործունեություն են ծավալել՝ հրավիրելով ոչ վաղ անցյալի «աստղերին»: Արաբական թիմերի հետ արդեն պայմանագրեր են կնքել Մարիո Բասլերը, Ֆրանկ Լեբյոֆը, Շտեֆան էֆենբերգը, Գաբրիել Բաշիստուան եւ Կլաուդիո Կանիջան:

Թիմերի քանակը կկրճատվի

2004/05 թթ. մրցաշրջանից սկսած Ֆրանսիայի ֆուտբոլի առաջին դիվիզիոնում 20 թիմի փոխարեն հանդես կգան 18 ակումբներ: Նման որոշում է ընդունվել Ֆրանսիայի պրոֆեսիոնալ լիգայի նիստում: Լիգայի նախագահ Ֆրեդերիկ Տիրեզը հայտարարել է, որ ֆուտբոլիստների համար ծանր առաջնությունում 38 խաղ անցկացնելը: Նոր մրցակարգի համաձայն, 18 թիմերի առկայության դեպքում երկրորդից առաջին դիվիզիոն կփոխադրվի ոչ թե 3, այլ 2 ակումբ:

Վեց հայտ

Ինչպես հայտնի է, ֆուտբոլի աշխարհի 2010 թ. առաջնությունն անցկացվելու է Աֆրիկայում: Առաջնությունը կազմակերպելու համար պաշտոնական հայտ են ներկայացրել վեց երկրներ՝ Եգիպտոսը, Մարոկկոն, Նիգերիան, Լիբիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը եւ Թունիսը: Սեպտեմբերի 30-ին ՖԻՖԱ-ի նստավայրում կներկայացվեն թեկնածուները: Իսկ 2004 թ. հունվարի 31-ից ՖԻՖԱ-ի ներկայացուցիչները հերթականությամբ կայցելեն հայտ ներկայացրած երկրներ՝ ծանոթանալու ֆուտբոլային տնտեսությանը: Այցերի արդյունքների հիման վրա էլ կընտրվի առաջնության կազմակերպիչ երկիրը:

Ռոնալդինյոն մնում է ՊՍԺ-ում

Վերջապես պարզություն մտցվեց ֆրանսիական «Պարի Սեն Ժերմենի» բրազիլացի հարձակվող Ռոնալդինյոյի այլ թիմ տեղափոխվելու հարցում: Ակումբի նախագահ Ֆրանսուա Գրալի հետ խորհրդակցելուց հետո Ռոնալդինյոն վճռել է մնալ թիմում: 23-ամյա ֆուտբոլիստով հետաքրքրվում էին «Մանչեսթր յունայթեդն» ու Մադրիդի «Ռեալը»: Բրազիլացի ֆուտբոլիստն ընթացիկ մրցաշրջանում կոնֆլիկտի մեջ էր ակումբի նախկին գլխավոր մարզիչ Լուիս Ֆեռնանդեսի հետ եւ մտադրվել էր առաջնության ավարտից հետո լքել թիմը: Սակայն թիմի նոր գլխավոր մարզիչ Վահիդ Խալիլխոջիչը եւ ակումբի նախագահ Ֆրանսուա Գրալը կարողացան համոզել Ռոնալդինյոյին շարունակելու ելույթները ֆրանսիացիների կազմում:

ՇԱԽՄԱՏ

Հակոբյանն առաջին կես միավորը վաստակեց

Ֆրանսիական էնգեն լե Բեն քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրն ամենաարդյունավետն էր: Ոչ-ոքի ավարտվեց միայն մեկ պարտիա: Երեք անընդմեջ պարտություններից հետո առաջին կես միավորը վաստակեց Վլադիմիր Հակոբյանը: Նրա մրցակիցը Ֆրանսիացի Բաուերն էր: Ի դեպ, Հակոբյանն իր անհատական գործակցով (2703) զիջում է միայն Եվգենի Բարեեւին (2734), Մայիլ Ադամսին (2723) եւ Յուդիթ Պոլգարին (2715): Հետաքրքրական զուգադիպությամբ հենց նշված եռյակն էլ 3-ական միավորով գլխավորում է աղյուսակը: Պոլգարը հաղթեց Լոթյեին, Ադամսը՝ Կորչնոյին, Բարեեւը՝ Ռաջաբովին: Նրանցից կես միավորով հետ են մնում Ֆրեսինեն ու Գելֆանդը: Նրանց միջեւ 4-րդ տուրում կայացած պարտիայում հաջողությունն ուղեկցեց Գելֆանդին: Դա մինչ այդ աղյուսակը գլխավորող Ֆրեսինեի առաջին պարտությունն էր: Աղյուսակը կեսական միավորով եզրափակում են Հակոբյանն ու Կորչնոյը: Ի դեպ, հայ գրոսմայստերը 2001 թ. դարձել էր այս մրցաշարի հաղթող:

Չեմպիոնության հարցը գրեթե վճռված է

Ֆուտբոլի Ուկրաինայի առաջնությունում նախավերջին տուրի հանդիպումներից հետո չեմպիոնության հարցը գրեթե վճռված է: Կիեւում 1-0 հաշվով հաղթելով «Արսենալին», տեղի «Դինամոն» վաստակեց 70 միավոր եւ ամրապնդեց առաջատարի դիրքը: Դինամոյականների գլխավոր մրցակից «Շախտյորը» Սիմֆերոպոլում երկու կարեւոր միավոր կորցրեց՝ ոչ-ոքի (3-3) խաղալով «Տավրիայի» հետ: Հանքագործ ֆուտբոլիստները 67 միավորով 2-րդ տեղում են: Գործնականում «Դինամոն» ապահովել է չեմպիոնի տիտղոսը: Վերջին տուրում Ալեքսեյ Միխայլիչենկոյի սաներին բավական է սեփական հարկի տակ ոչ-ոքի ավարտել խաղն առաջնությանը հրաժեշտ տվող Խարկովի «Մետալիստի» հետ: Իսկ «Շախտյորը» մրցելու է ՈՒԵՖԱ-ի գավաթի ուղեգրի համար պայքարող Կիեւի «Արսենալի» հետ:

Բլաստերը մեղադրում է իսպանացիներին

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլաստերը մեղադրել է ֆուտբոլի Իսպանիայի ֆեդերացիային միջազգային խաղացանկը չհարգելու համար: Պատճառն այն է, որ Իսպանիայի առաջնությունը դեռեւս չի ավարտվել, որի հետեւանքով ակումբները հրաժարվում են առաջատար ֆուտբոլիստներին գործուղել կոնֆեդերացիայի գավաթի մրցաշարին մասնակցող հավաքականներ: Բլաստերը նշել է, որ այդ մրցաշարի խաղացանկը հաստատվել էր դեռեւս 2000 թ., ուստի իսպանացիները կարող էին առաջնության անցկացման համար այլ ժամկետներ ընտրել:

Ներկայում Եվրոպայում աշուն-գարուն մրցակարգով անցկացվող ազգային առաջնություններից միայն Իսպանիայում է մրցաշարը շարունակվում: Բլաստերը հայտարարել է, որ իսպանացիների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հարցը կքննարկվի հաջորդ շաբաթ:

Ռոմանցեւը պաշտոնանկ արվեց

Նախորդ համարում տեղեկացրել էինք, որ Օլեգ Ռոմանցեւի թիմում մնալ-չմնալու հարցը վերջնականապես պետք է որոշվեր այսօր՝ «Սպարտակ»-«Մատուրն» հանդիպումից հետո: Սակայն ինչպես ասում են՝ շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Հայտնի է դարձել «Սպարտակի» բաժնետերերի խորհրդի նիստի որոշումը. գլխավոր մարզիչ Օլեգ Ռոմանցեւը, Սերգեյ Պավլովն ու նրանց օգնականները պաշտոնանկ են արվել: Թիմի ղեկը ստանձնել է Անդրեյ Չեռնիշովը, որին կօգնեն Գեորգի Յարցեւն ու Սերգեյ Յուրանը:

Այսպիսով, Օլեգ Ռոմանցեւի «Սպարտակում» պաշտոնավարելու ժամանակաշրջանն ավարտվեց: 1988 թ. Ռոմանցեւը գլխավորում էր «Սպարտակը» եւ դարձել էր ակումբի խորհրդանիշը: Ակումբի նախագահ Չերվիչենկոյի հետ կոնֆլիկտը հանգուցալուծվեց: Հիշեցնենք, որ Ռոմանցեւը լրագրողների հետ հանդիպման ժամանակ խիստ քննադատել էր ակումբի ղեկավարության վարած քաղաքականությունը, իսկ Չերվիչենկոն իր հերթին լրատվամիջոցներում հայտարարել էր, որ մարզիչը թիմում չպետք է աշխատի:

Նշենք, որ թիմի երկրպագուները պաշտպանում էին Ռոմանցեւին, իսկ երբ հայտնի դարձավ որոշումը, բողոքի ցույց կազմակերպեցին ակումբի շենքի մոտ: Սակայն դա ոչ մի արդյունք չտվեց: Հարկ է նշել, որ վերջին ամիսներին լուրեր էին պտտվում Ռուսաստանի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Անդրեյ Չեռնիշովի՝ «Սպարտակի» մարզչական կազմում ընդգրկվելու վերաբերյալ: Նրա հետ ժամանակին ավստրիական «Շտուրմում» հանդես եկող Սերգեյ Յուրանի մուտքն էլ «Սպարտակ» պատահական չէր: Սրանք վկայում են, որ ակումբի ղեկավարությունը վաղուց արդեն քայլեր էր ձեռնարկում Ռոմանցեւին պաշտոնանկ անելու համար: Ի դեպ, հայտնի է դարձել, որ «Կապիտալ» բաժնետիրական ընկերությունը պատրաստ էր 7-10 մլն դոլար ներդրում կատարել «Սպարտակի» համար նոր ֆուտբոլիստներ գնելու, պայմանով, որ Ռոմանցեւը հեռացվի պաշտոնից: Ռոմանցեւի հետ պայմանագիրը խզելու համար ակումբը մարզչին ոչ մի փոխհատուցում չի վճարելու: Ավելին, ակումբը պատրաստվում է վերջինից գանձել 90 հազար եվեյցարական ֆրանկ եւ 300 հազար ռուբլի, քանի որ չեմպիոնների լիգայի եւ ՈԴ առաջնության հանդիպումներից հետո կայացած մամուլի ասուլիսներին չմասնակցելու համար «Սպարտակը» տուգանվել էր նման գումարներով:

Ռեկորդը մնաց անսասան

Չողացատկի եվրոպայի ռեկորդակրուհի Սվետլանա Ֆեոֆանովան հաղթող ճանաչվեց Ֆրանսիական Լիլ քաղաքում անցկացված թեթեւ ատլետիկայի Գրան պրիի մրցաշարում: Նա հաղթահարեց 4 մ 72 սմ բարձրությունը՝ 10 սմ-ով գերազանցելով իր հայրենակցուհի Դրագիլայի ցուցանիշը: Հաղթանակն ապահովելուց հետո Ֆեոֆանովան երեք անգամ գրոհեց Դրագիլայի աշխարհի ռեկորդը, սակայն այդպես էլ չկարողացավ հաղթահարել 4 մ 82 սմ բարձրությունը:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ավարտվեց ԼՂՀ խորհրդարանի վեցերորդ նստաշրջանը

Երրորդ գումարման ԼՂՀ Ազգային ժողովը հունիսի 18-ին անցկացրեց վեցերորդ նստաշրջանի եզրափակիչ նիստը: Խորհրդարանն, այսպիսով, ավարտեց նաեւ իր գործունեության երրորդ տարին: Ի դեպ, 2000 թ. հունիսի 18-ը ԼՂՀ-ում խորհրդարանական ընտրությունների օրն էր, եւ այս նստաշրջանի ավարտը զուգադիպել էր պատգամավորների համար հիշարժան այդ իրադարձության տարեդարձին:

Օրենսդրական գործունեության առումով, թերեւս, 6-րդ նստաշրջանը դժվար թե նշանակալի համարվի: Փետրվար-հունիսին Ազգային ժողովում ընդունվել են գերազանցապես տնտեսական ոլորտին առնչվող օրինագծեր, սակայն հունիսի 18-ի նիստն առանձնահատուկ էր «Կուսակցությունների» եւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էթիկական օրենսգիրք» օրինագծերի շուրջ ծավալված բավական տարողունակ բանավեճերով:

Այս հարցերի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես էր եկել հանրապետության կառավարությունը, որ վկայում է երկրի քաղաքական եւ իրավական համակարգերի ազատականացման եւ հետագա կենսագործունեության նկատմամբ գործադիր իշխանության նախանձախնդիր վերաբերմունքը:

«Կուսակցությունների մասին» օրենքի ընդունմամբ, կարծում ենք, հանրապետությունում առ այսօր գործող քաղաքական ուժերի համար բացվելու է հետագա ինքնահաստատման խնդիր, եւ արդեն նրանցից է կախված լինելու, թե ինչ կշիռ ու հեղինակություն կունենան երկրի կյանքում: Հավանաբար բացվում է նաեւ ԼՂՀ-ում Ազգային ժողովի պատգամավորների ընտրության գործող օրենքի փոփոխության հեռանկար՝ նկատի ունենալով, որ համամասնական ընտրակարգը կուսակցությունների քաղաքական կայացման համար լուրջ եւ հիմնարար գործոն է: Ազգային ժողովը, սակայն, որոշեց մինչեւ հաջորդ նստաշրջան հետաձգել «Կուսակցությունների մասին» օրինագծի քննարկումները:

Նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ ԼՂՀ-ն վերահաստատում է իր հավատարմությունը ժողովրդավարությանը եւ իրավական պետություն լինելու սկզբունքին: Այս առումով ԼՂՀ-ն նաեւ իրավական համակարգի բարեփոխմամբ զբաղվում է այն մակարդակի վրա, որ յուրահատուկ է տարածաշրջանի երկրներին, այսինքն, ըստ էության, թեեւ դեռ չճանաչված, նորանկախ հանրապետությունը հարգում է Եվրոպայի խորհրդի չափանիշները: Այս հանգամանքն ունի նաեւ արտաքին քաղաքական կարեւորություն, ինչը չեն կարող հաշվի չառնել ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ միջազգային միջնորդները:

Ազգային ժողովը հանրապետությունում հազվագյուտ ծառայությունների հատումների օրինականությունը ստուգելու նպատակով՝ որոշեց ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որը կգլխավորի պատգամավոր Կարեն Աղամյանը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Հանդիպում մերձմոսկովյան Իսրայում

ՌԴ-ում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանն այցելեց Մոսկվայի մարզի Իսրա քաղաք՝ տեղի հայ համայնքի հրավերով: Ռուսաստանի հայահոծ սփյուռքի մի զգալի հատվածը, ինչպես հայտնի է, բնակվում է Մոսկվայում եւ մարզում: Մեր հայրենակիցներից շատերը այս կամ այն խնդիրներն ունեն ռուսաստանյան իշխանությունների հետ, որոնք հաճախ թերեւս միայն հայկական դեսպանատան միջոցով կարելի է լուծել, ինչը փորձում է անել Ա. Սմբատյանը պարբերաբար այցելելով հայ համայնքներ:

Իսրայի հանդիպման թեմաներից մեկն էլ նոյեմբերի 1-ից ուժի մեջ մտած ՌԴ օրենքն էր օտարերկրյա քաղաքացիների միգրացիայի կարգավորման վերաբերյալ, ինչը բնական անհանգստություն է հարուցել նաեւ Ռուսաստանում բնակվող հայերի շրջանում: Դեսպան Ա. Սմբատյանը ներկաներին համառոտ ներկայացրեց դեսպանության գործառույթների առանձնահատկությունները վերը նշված օրենքի կտրվածքով, նշելով, որ այսօր Ռուսաստանում բնակվող Հայաստանի քաղաքացիներից շատերը, հնարավոր է, զգալի բարդություններ կհանդիպեն դրա կիրառման հետեւանքով, քանի որ նրանց մեծ մասը օգտվում է հին, խորհրդային անձնագրերից, որոնք արդեն իսկ անվավեր են Հայաստանում, իսկ Ռուսաստանում կգործեն մինչեւ այս տարվերջ: Նա նշեց նաեւ, որ միջպետական մակարդակով քննարկումներ են ընթանում, որպեսզի Հայաստանի քաղաքացիների հարցում Ռուսաստանը որոշակի մեղմացումների դիմի, եւ, ամենայն հավանականությամբ, արդյունքը դրական կլինի:

Այնուհետեւ ներկաները հարցեր ուղղեցին դեսպանին, որոնց մեծ մասը քննարկվող թեմայի շրջանակներից դուրս էր: Մասնավորապես, հավաքվածներին հետաքրքրում էին թե քաղաքական, թե մշակութային, թե սոցիալ- տնտեսական հարցեր: Օրինակ, Հայաստանի արեւմտամետ կամ ռուսական կողմնորոշման վերաբերյալ հարցին դեսպանը պատասխանեց, որ Հայաստանը իր արտաքին քաղաքականությունը կառուցում է սեփական երկրի շահերից ելնելով:

Ներկաներին հետաքրքրեց հետաքրքրում էին դեսպանատան հյուպատոսական ծառայության գործունեությունը եւ գանձվող տուրքերի չափը: Իսրան բավական մոտ է Մոսկվային, եւ այնտեղ բնակվողների համար Մոսկվա հասնելը դժվար չէ: Դեսպանը պարզաբանեց, որ այդ տուրքերի չափը սահմանված է ՀՀ Աժ կողմից եւ դեսպանատունը գործում է ՀՀ օրենքի շրջանակներում:

Շոշափված առավել հետաքրքրություն ներկայացնող հարցերի թվում էր նաեւ երկքաղաքացիությունը: Դեսպանը նշեց, որ երկքաղաքացիության խնդիրը օրակարգում է, եւ դրանով զբաղվում են միջազգային իրավունքի մասնագետները:

Բավական հետաքրքրական անակնկալ մատուցվեց դեսպանին քաղաքում շրջագայելու ընթացքում. Նոր Երուսաղեմ կոչվող եկեղեցին, որ Իսրայում կառուցվել է դեռեւս 17-րդ դարի կեսերին, ճիշտ եւ ճիշտ կրկնում է Երուսաղեմի Քրիստոս Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետությունը, որի մի թեւը, ինչպես հայտնի է, հայ առաքելական եկեղեցու ենթակայության տակ է:

Այցի ավարտին զրուցելով դրա մասնակիցների հետ, նկատեցինք, որ տեղացի մեր հայրենակիցները զգալիորեն ավելի լավատես են դարձել. նրանք հուսով են, որ իրենց բազում խնդիրների մի մասը արդեն ի վիճակի են լուծել Ռուսաստանում գործող ՀՀ դեսպանատան միջոցով:

ՈՍԿԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ
Մոսկվա

ԱՐՑԱԽ

Խմելու ջուրը հասավ Մեհմանա

Վաշինգտոնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրասենյակից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ անցյալ շաբաթվա ընթացքում ավարտին է հասել Մեհմանա գյուղի ջրամատակարարման ծրագիրը, որն իրականություն է դարձել Նյու Հեմփշիրից (ԱՄՆ) եղիայան ընտանիքի առատաձեռն նվիրատվության շնորհիվ:

Գործարկվող համակարգը, ըստ հաղորդագրության, չափազանց պարզ է, վստահելի եւ արդյունավետ: «Մենք երախտապարտ ենք եղիայան ընտանիքին հայրենասիրական նախաձեռնության համար», ասել է ԼՂ ներկայացուցիչ Վարդան Բարսեղյանը:

Մասնագիտությամբ ինժեներ Արա Եղիայանը մտահղացել է այս ծրագիրը 2000 թ. Արցախ այցելելուց հետո: «Երբ Մեհմանա գյուղը մուտք գործեցի, մեծապես ազդվեցի այդ գեղեցիկ բնակավայրի մարդկանց բարությունից եւ հյուրասիրությունից, նշել է Եղիայանը, նրանց ջրային համակարգն ընդամենը մի բաց խրամատ էր, որի միջով բլրի բարձունքի բնական աղբյուրից ջուրը հոսում էր ցած, դեպի կենտրոն: Կանայք դույլերով տուն էին քարշ տալիս ջուրը: Ձմռանը պետք է մակերեսի սառույցը ջարդեին, որ կարողանային ջուր վերցնել: Մտածեցի, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր տուն մատուր, խմելու ջուր հասցնել: Իմ առաջարկին մեծապես օգնեց Վաշինգտոնում Լեռնային Ղարաբաղի գրասենյակը, որն անհրաժեշտ տեղեկություններ տվեց ինձ»:

Սկզբում ծրագրի հեղինակը մտածել է ամեն ինչ Մ. Նահանգներից ներկրել, սակայն հետագայում տեղական նյութերն են օգտագործվել, եւ ծրագրի արժեքն ընդամենը կազմել է 5 հազար դոլար:

Մեհմանայում ապրում է հիմնականում հույներից կազմված մի փոքրիկ համայնք, որն այնտեղ բնակություն է հաստատել մոտ 200 տարի առաջ պղինձ, կապար եւ ոսկի որոնելու մղումներով: Այդ հանքերը փակվել են 1950-ական թթ., եւ մարդիկ սկսել են զբաղվել հողագործությամբ:

«Ջրամատակարարման նոր համակարգը նոր կյանք է պարգեւելու այս հեռավոր շրջանի աշխատասեր մարդկանց», վերջում նշել է Վաշինգտոնում ԼՂ գրասենյակի ներկայացուցիչ Վարդան Բարսեղյանը:

Հ. Ծ.

Քաղաքում եւս հարկեր կվճարեն

Այս աշնանը քաղաքացիներին անակնկալ է սպասում: Այսուհետեւ իրենց գյուղերի, համայնքների խնդիրները նրանք լուծելու են սեփական միջոցներով: Դրանց լուծման համար շրջանի վարչակազմն այլեւս պատասխանատու չի լինի: Հողի հարկերը, որ նոյեմբերից կսկսեն վճարել քաղաքացիները, իրենց համայնքներից դուրս չեն գա: Այդ գումարներով համայնքը կկազմի իր բյուջեն: Հետո այդ բյուջեի միջոցներով իր ներսում ճանապարհներ կկառուցի, կանցկացնի ջրատարներ, կլուծի ոռոգման ջրի հարցը եւ էլի շատ ու շատ հարցեր: Ղեկավարությունն էլ կհսկի, որ ամեն ինչ կատարվի, ինչպես հարկն է:

«Շատ խնդիրներ կան, որ ուղղակի բյուջեով նախատեսված չեն, ասում է Քաղաքաղի վարչակազմի ղեկավարի տեղակալ Գագիկ Քոսակյանը, բայց, միեւնույն է, այդ խնդիրները պետք է լուծվեն: Հաշվի առնելով, որ մարդիկ արդեն ամրագրել են, հողը մշակում են, եկամուտ են ստանում, նրանք ի վիճակի կլինեն վճարել հողի հարկը, մանավանդ որ շատ ցածր է»:

Հողի հարկի մի մասը քաղաքացիները կվճարեն տվյալ տարվա նոյեմբերի 15-ին, իսկ մյուս կեսը՝ հաջորդ տարվա ապրիլին: Միջին հաշվարկներով մեկ հեկտարի համար նրանք կվճարեն 5-6 հազար դրամ: Մոտավոր հաշվարկներով համայնքների տարեկան բյուջեն կկազմի 1-1,5 միլիոն դրամ: Սակայն այդ գումարով շատ դժվար կլինի որեւէ խնդիր լուծել, քանի որ Քաղաքաղում միայն գյուղատեսի տարեկան միջին աշխատավարձը, որ այսուհետեւ վճարվելու է համայնքի բյուջեից, 250 հազար է: Ամեն համայնքում մոտ 2-3 գյուղատեսներ կա: Ստացվում է, որ համայնքն իր բյուջեի կեսը կամ կեսից ավելին ծախսելու է միայն գյուղատեսների աշխատավարձերը վճարելու համար:

ԱԼՎԻՆԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ARMENTEL

Արմենտելը տեղեկացնում է բջջային կապի կանխավճարային համակարգի *(Easy card-ի)* բաժանորդներին

✓ Բջջային կանխավճարային քարտը (Easy card-ը) կորցրած քաղաքացիները քարտի անջատման համար կարող են դիմել Արմենտել ՀՁ (Ահարոնյան 2) շարժական կապի ծառայությունների վարչություն, իրենց հետ ունենալով քարտի PIN եւ PUK կոդերը պարունակող թղթը եւ անձնագիրը:

✓ Արմենտել ՀՁ-ն լրացուցիչ տեղեկացնում է, որ անջատված քարտերը չեն փոխարինվում եւ չեն վերականգնվում:

Հարգելի քաղաքացիներ, բջջային կանխավճարային քարտ (Easy card) ձեռք բերելիս պահանջեք քարտի PIN եւ PUK կոդերը պարունակող թղթը: Այդ թղթի բացակայության դեպքում կապուղին ենթակա է անջատման:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա/ձ-ռիէլտոր «Արմեն Քարամյան»-ը Երեւանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի հարթակում աճուրդային վաճառքի է ներկայացնում՝

Լուծարվող «Գյումրու Տեքստիլ» ԲԲԸ-ի գույքը՝

- Վերջնամշակման ֆաբրիկայի մասնաշենքի երկու հարկը եւ նկուղային տարածքը (ընդ. մակ.՝ 1546.71 քառ. մ.)

Գույքի մեկնարկային գինը՝ 2.300.000 դրամ:

- Մեկ հարկանի կիսակառույց կենցաղային շենք (ընդ. մակ.՝ 448.8 քառ. մ.)

Գույքի մեկնարկային գինը՝ 367000 դրամ:

Հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 7:

- Երեք հարկանի հանրակացարանի կիսափուլ մասնաշենք (ընդ մակ.՝ 1791.54 քառ. մ.): Գույքի մեկնարկային գինը՝ 828540 դրամ:

Հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 26:

Աճուրդները՝ դասական եղանակով ս. թ. հուլիսի 21-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13.00, ք. Երեւան, Մհեր Մկրտչյան 5 հասցեում:

Տեղեկությունների համար դիմել Ա/ձ-ռիէլտոր «Արմեն Քարամյան»-ին: Հեռ. /09/ 41-68-18 կամ 56-31-15, 56-48-83

529353 ԱՆՎՃԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

■ «Ռոսիա» կինոթատրոնի տարածքում կորել է Նարինե Նալբանդյանի վարորդական իրավունքը, Աշոտ Խուդավերդյանի վարորդական իրավունքը, Վազ 21 07 մակնիշի 02 SL 169 համարանիշով ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը: Վերադարձնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Հեռ.՝ 36 97 98, 09 40 74 16:

■ Վաճառվում են դրքերման պինչեր ցեղատեսակի զտարյուն նորածին ծագեր: Գինը՝ 100 դոլար: Հեռ.՝ 584908:

■ Պարարտում եմ խոսակցական անգլերեն երեխաների եւ մեծահասակների հետ, մատչելի գնով, անհատական եւ խմբակային: Զանգահարել՝ 22-79-76 (երեկոյան ժամերին), Նիկին (բնիկ կալիֆոռնիացի):

■ Պարարտում եմ անգլերեն առանց տարիքային սահմանափակման, ինչպես նաեւ կատարում եմ թարգմանություններ անգլերենից հայերեն եւ հակառակը: Զանգահարել՝ 230786, Հասմիկ:

■ Կատարում եմ տնային մաքրություն, ինչպես նաեւ կարում եմ վերմակ եւ ներքնակ: Հեռ.՝ 230786, Հռիփսիմե:

■ Երեքունի թանգարանը փնտրում է հովանավոր՝ կիրառական արվեստի եւ ժանյակագործության (Վասպուրականի) խմբակների համար: Հեռ.՝ 523202, 572797:

■ Պահանջվում են ավտոլվացողներ, ավտոելեկտրիկներ: Աշխատավայրը գտնվում է «Նաիրի» կինոթատրոնի մոտ: Զանգահարել 562029 հեռախոսահամարով, կամ այցելել ք. Երեւան, Գ. Քոչարի 21:

■ Շտապ վաճառվում է ռումինական հյուրասենյակի կահույք պատ՝ իր փափուկ կահույքով, նաեւ սառնարան: Հեռ.՝ 65-68-37:

■ Վաճառվում է «Իկարուս» մակնիշի ավտոբուս 1985 թ. արտադրության, արտակարգ վիճակում, նոր վերանորոգված, շարժիչը՝ «ԿՐԱԶ»-ի լավ վիճակում, գույնը՝ կարմիր, սրահն ամբողջովին նոր: Գինը՝ 5000 ամերիկյան դոլար: Հեռ.՝ (041) 21 607, Հովիկ:

■ Շտապ վաճառվում են օգտագործված ռումինական մահճակալ, հարավսլավական սոֆա: Հեռ.՝ 26-01-80, 22-89-01:

■ Տրվում է վարձով 1.5 սեն. բնակարան փոքր կենտրոնում 10/5: Հեռ.՝ 62-58-35:

■ Գնեմ հին քարտ: Հեռ.՝ (09) 423833:

■ Վաճառվում է ամառանոց Արայի լեռան լանջին, Երեւանից 50 կմ հեռավորությամբ: Ամառանոցը երկհարկանի շինություն է, ավտոնկակով, 1000 քմ հողատարածքով, ունի 120 հատ ծառ: Գինը՝ 5000 դոլար: Հեռ.՝ 25-00-96, Հունան:

■ Վաճառվում է 3 սենյականոց բնակարան շամպայն գինիների գործարանի մոտ, 16-րդ հարկի 4-րդ հարկում, արեւկող, ընդ մակերեսը՝ 80 քմ, բնակելին՝ 44 քմ, ունի երկու տնտեսական պատշգամբ: Գինը՝ 11.500 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 45 22 79:

■ Վաճառվում է բջջային հեռախոս «Ալկատել-525», փոխվող պանելով, գինը՝ 190 դոլար: Հեռ.՝ 45 22 79:

■ Վաճառվում է 1985 թ. արտադրության «Մերսեդես-Բենց» 230E մակնիշի ավտոմեքենա: Գինը՝ $ 4000: Հեռ.՝ 48-21-19

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 18. 6. 2003 Գինը՝ 100 դրամ